Ուսանողի ձեռնարկ

14

Հոգևոր զորությունը և գերբնականը

Բացահայտել իրական հոգևոր զորությունը և դրա ազդեցությունը

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Հոգևոր զորությունը և գերբնականը

Բացահայտել իրական հոգևոր զորությունը և դրա ազդեցությունը

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Հոգևոր զորությունը և գերբնականը

Բացահայտել իրական հոգևոր զորությունը և դրա ազդեցությունը
Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *Spiritual Power and the Supernatural, 5th edition* վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈԼՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 11-2022

Բովանդակություն

Ներածություն **4**

Գլուխ 1. Աստծո դերը մեր աշխարհում: **6**

Ա. Ի՞նչ են մարդիկ այսօր մտածում Աստծո մասին: 6

Բ. Արարչագործության Աստվածը: 7

Գ. Ինչպե՞ս էր Աստված շփվում մարդկանց հետ աստվածաշնչյան ժամանակներում: 8

Դ. Ինչպե՞ս է Աստված օգտագործում Իր գերբնական ուժը: 9

Ե. Աստված ի՞նչ ծրագրեր ունի ապագայի վերաբերյալ: 11

Գլուխ 2. Ի՞նչ է հոգևոր զորությունը: **12**

Ա. Հոգևորապես թույլ լինելու իրականությունը: 12

Բ. Ի՞նչ է ճշմարիտ հոգևոր զորությունը: 13

Գ. Ի՞նչ է նշանակում հոգևորապես ուժեղ լինել: 14

Դ. Մի՛ փորձիր կրկնօրինակել Աստծո զորությունը: 18

Ե. Հոգևորապես ուժեղ կյանք ունենալու չորս բանալիները. 19

1. Հավատալիք, ... 19
2. Վստահություն, ... 20
3. Հույս, ... 21
4. Հավատ: 22

Զ. Հոգևոր ուժ ունենալու այս չորս բանալիների միջև եղած կապը:. 24

Է. Որտե՞ղ կարող ենք օգտագործել հոգևոր զորությունը մեր կյանքում: 26

Գլուխ 3. Ինչպե՞ս ունենալ հոգևոր զորություն: **29**

Ա. Մի՛ աշխատիր հրաշքների մեջ մասնագիտացած հոգևոր գերաստղ լինել: 29

Բ. Ժամանակ և աշխատանք է պահանջվում հոգևոր զորություն զարգացնելու համար: 31

Գ. Հոգևոր զորություն զարգացնելու հիմնական քայլերը: 32

Դ. Դ. Իսկ որտեղի՞ց ես պետք է սկսեմ: 37

Գլուխ 4. Ճշմարիտ հոգևոր զորությունը և արհեստածինները: **38**

Ա. Աստծո ուժը, սատանայի ուժը և մարդու ուժը: 38

Բ. Սատանան ուզում է շփոթեցնել արհեստածին փորձություններով: 43

Գ. Սխալները հավատի ուսուցումների մեջ այսօր: 47

Ներածություն

Գերբնական դեպքերը և «հոգևոր» փորձությունները հաճախ լավ թեմաներ են դառնում տարբեր կողմերի քննարկման համար: Ինչքան ֆանտաստիկ է տվյալ պատմությունը, այնքան լավ: Մի քանիսը պատմություններ ունեն առ այն, թե ինչպես է իրենց հորոսկոպն իրենց զգուշացրել օրվա վտանգի մասին, իսկ մի քանի ժամ անց նրանք հայտնվել են վթարի մեջ: Ոմանք արհամարհում են նման պատմությունները, մյուսները վստահ չեն, բայց և այնպես, ամեն դեպքում նրանք ստուգում են իրենց հորոսկոպն այդ օրվա համար:

Նորադարձ հավատացյալները հեշտությամբ կարող են շփոթության մեջ ընկնել այն «հոգևոր ուժերի» պատճառով, որոնք կարծես ի հայտ են գալիս մեր աշխարհում: Թերթերը լուրեր են տարածում, թե ինչպես է մի մայր շփվել իր որդու հետ, ով մահացել էր երեք տարի առաջ: Այս պատմությունները ճի՞շտ են: Իսկ ի՞նչ կարող ենք ասել ձեռքի ափով գուշակողների և թուղթ ու գիր անողների մասին: Կարողանո՞ւմ են որոշ մարդիկ գուշակել ապագան: Այսօր հրաշքներ լինո՞ւմ են: Կարո՞ղ ենք մենք իրականում հավատալ Աստվածաշնչի բոլոր պատմություններին: Կամ գուցե դրանք հորինվա՞ծ են, ինչպես՝ Մոխրոտիկը, Չղջիկ-մարդը կամ Սարդ-մարդը:

Հավատացյալները շատ են խոսում հոգևոր ուժ ունենալու մասին: Նրանք մատնացույց են անում հավատի մեծ առաջնորդներին ու ասում. «Նա շատ հոգևոր մարդ է: Նա Սուրբ Հոգով է առաջնորդվում: Աստված իրոք գործածում է նրան»: Ինչպե՞ս են մարդիկ այդպիսի հոգևոր ուժ ստանում: Հավատացյալները հաճախ աղոթում են Աստծուն, որպեսզի կարողանան հրաշքներ անել՝ բժշկել մահամերձ մարդուն, բացել կույր աչքերը, բժշկել ցավող մեջքը: Աստված իրականում կարողանո՞ւմ է այսպիսի բաներ անել այսօր:

Արդյո՞ք Աստված միակն է, ով կարողանում է գերբնական գործեր կատարել: Իսկ որքա՞ն ուժեղ են սատանան ու իր հրեշտակները: Կարո՞ղ են նրանք վնասել կամ բուժել մարդկանց: Ի՞նչ կարող ենք ասել Հնդկաստանի այն մարդկանց մասին, ովքեր քայլում են շիկացած ածուխների վրայով, բայց նրանց ոտքերը չեն վառվում: Դա աչքակապությո՞ւն է: Որքա՞ն ուժեղ է մարդը: Կարո՞ղ է մարդը գդալ ծռել՝ ընդամենն իր մտային ուժը դրա վրա կենտրոնացնելով, սակայն դրան չդիպչելով:

Եթե այսօր աշխարհում տարբեր ուժեր են գործում, ինչպե՞ս կարող են հավատացյալները տարբերել Աստծո ուժը և սատանայի ուժը: Ինչպե՞ս է հավատացյալը հոգևոր ուժ ստանում: Որքա՞ն ժամանակ պետք է մարդը հավատացյալ լինի, որպեսզի Աստված նրան հոգևոր ուժ տա: Ի՞նչ սահմանափակումներ է Աստված դնում հավատացյալների վրա, ովքեր ուզում են օգտագործել Իր զորությունը: Ի՞նչ է հավատը: Ինչպե՞ս կարող են հավատը, հավատալիքը, հույսը և վստահությունը մարդուն օգնել, որպեսզի նա հոգևորապես ուժեղ դառնա:

Այս դասընթացին մենք կքննարկենք Աստծո գերբնական ուժի մասին, և թե ինչպես է այն ազդում մեր կյանքի վրա: Շատ դեպքերում Աստված օգտագործում է Իր գերբնական ուժը հրաշքներ կատարելու համար: Մի հարց, որին մենք կփորձենք պատասխանել, հետևյալն է. «Ի՞նչ գերբնական գործեր ես կարող եմ ակնկալել Աստծուց իմ կյանքում»: Մենք կուսումնասիրենք, թե ինչ է ճշմարիտ հոգևոր զորությունը: Ինչքանո՞վ են հավատը, հավատալիքը, հույսը և վստահությունը համապատասխանում ճշմարիտ քրիստոնյայի կյանքին, որը հոգևոր ճշմարիտ ուժ ունի: Ինչպե՞ս կարող եմ հոգևորապես ուժեղ մարդ դառնալ:

Գլուխ 1.

Աստծո դերը մեր աշխարհում:

Ա. Ի՞նչ են մարդիկ այսօր մտածում Աստծո մասին:

Շատ մարդիկ երբևէ ժամանակ չեն տրամադրել Աստծուն անձամբ ճանաչելու համար: Այնպես որ զարմանալի չէ, որ նրանք սխալ կարծիք ունեն Աստծո վերաբերյալ: Աստված գահի վրա գավազանը ձեռքին նստած չի սպասում, թե երբ ենք մենք Իր սահմանները խախտելու, որպեսզի հարվածի մեզ: Նա չար ու զայրացկոտ Աստված չէ: Նա սիրո և համբերության Աստված է: Նա միանշանակ տխրում է, երբ մենք մեղք ենք գործում: Բայց Նա ամբողջ օրը զբաղված չէ հնարավորություն փնտրելով, որպեսզի պատժի մեզ ամեն անգամ, երբ չենք կարողանում կատարյալ լինել: Եթե Աստված երկայնամիտ ու ողորմած չլիներ, մենք բոլորս արդեն մահացած կլինեինք:

Որոշ մարդիկ Աստծուն նայում են հակառակ կողմից: «Եթե Աստված կա, - ասում են նրանք,- ուրեմն Նա այնքան էլ հոգ չի տանում, թե ինչ է այսօր տեղի ունենում այստեղ՝ երկրի վրա: Նայեք այդ բոլոր անարդարություններին, սովին, աղքատությանը և պատերազմներին: Եթե իրոք Աստված է ստեղծել աշխարհը, ուրեմն Նա մեզ հենց ամենասկզբից մատնել է բախտի քմահաճույքին»:

Դու չես կարող այս դիրքը բռնել և միևնույն ժամանակ հավատալ, որ Աստվածաշունչը ճշմարիտ է: Աստված աշխարհը չի ստեղծել ու լքել՝ ասելով. «Հիմա դուք ինքնագլուխ եք: Մի՛ դիմեք Ինձ, երբ խնդիրներ ունենաք»: Աստված լուռ չէ: Իրականում Նա հոգ է տանում քո և բոլոր մարդկանց համար:

«Մեր ապագան արդեն որոշված է,- ասում է մարդկանց մեկ այլ խումբ, - Աստված ամեն բան գիտի: Նա է ամեն բան վերահսկում: Մենք ընդամենը խամաճիկներ ենք Նրա թելերի վրա: Իմաստ չունի փորձել ինչ-որ բան փոխել: Եթե Աստված իրականում ցանկանա ինձ փոխել, Նա կարող է դա անել»:

Իրականում ճշմարտությունն այն է, որ մենք խամաճիկներ չենք: Աստված մեզ ստեղծել է ազատ ընտրության կարողությամբ: Նա կխոսի մեզ հետ և կուղղորդի, սակայն երբեք չի ստիպի հետևել Իրեն:

Իսկ դո՞ւ: Դո՞ւ ինչ ես մտածում Աստծո մասին: Դու Աստծո գոյության որևէ ապացույց տեսե՞լ ես քո կամ ուրիշ մարդկանց կյանքում:

Բ. Արարչագործության Աստվածը:

Աստվածաշունչը հստակ ցույց է տալիս Աստծո դերը մեր աշխարհում: Աստվածաշնչի առաջին գիրքը մեզ պատմում է, թե ինչպես Աստված ստեղծեց տիեզերքը՝ արևը, լուսինը, աստղերը, մոլորակներն ու կենդանական աշխարհը: Աստված խոսքով ստեղծեց ողջ ստեղծագործությունը: Նա կյանք տվեց Ադամին ու Եվային, երբ նրանց մարմինները ստեղծեց գետնի փոշուց: Ստեղծագործության յուրաքանչյուր հատվածն առանձին գերբնական զարմանահրաշ տեսարան է:

Աստված մեզ ստեղծեց յուրահատուկ ունակությամբ՝ ազատ կամքով: Դու ունակություն ունես ընտրություն կատարելու և անձնական որոշումներ կայացնելու: Դու կարող ես որոշել՝ հետևե՞լ Աստծուն, թե՞ ինքնագլուխ ապրել: Ընտրության այս ունակությունն ուղղակիորեն կապված է մեղքի գոյության հետ աշխարհում: Մենք բոլորս մեղք գործելու գայթակղություն ենք ունենում: Ամեն անգամ, երբ փորձության մեջ ենք, մենք ենք ընտրում՝ դիմադրե՞լ դրան, թե՞ զիջել: Մենք պատասխանատու ենք մեր կատարած ընտրության համար: Մեր ընդունած որոշումների համար չենք կարող մեղադրել մարդկանց, Աստծուն, կամ նույնիսկ սատանային: Դու կարողություն ունես ընտրություն անելու ճշտի և սխալի միջև:

Բնության օրենքները

Երբ Աստված աշխարհը ստեղծեց, Նա «բնության օրենքներ» հաստատեց: Ամբողջ ստեղծագործությունը պետք է ապրի այս օրենքների համեմատ: Երբ մենք խախտում ենք բնության օրենքները, կրում ենք դրանց վատ հետևանքները:

Եթե դու գիտակցաբար (կամ միամտաբար) ապակե ծաղկամանը սեղանից ցած գցես, այն կընկնի և, հավանաբար, կկոտրվի: Ձգողականության օրենքը պատճառ է դառնում, որ ծաղկամանն ընկնի ցած: Ձգողականության օրենքները, ինչպես նաև մյուս օրենքները, ստիպողական են: Եթե ինչ-որ բան ընկնի, այն ցած կընկնի, ոչ թե կողք կամ վերև:

Եթե մեքենան վարես սուր մեխի վրայով, անիվը կծակվի: Բնության օրենքներն են գործում տվյալ իրավիճակում: Եթե շոգ եղանակին ջուր չխմես, ապա սաստիկ կծարավես:

Կան հարյուրավոր այլ օրինակներ, թե ինչպես են բնության օրենքներն ազդում մեզ վրա: Ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո էլ դու շարունակում ես ենթակա լինել բնության օրենքներին: Դու չես կարող ակնկալել, որ Աստված այդ օրենքները կչեղարկի քեզ համար միայն այն պատճառով, որ հավատացյալ ես:

Ի՞նչն է որևէ բան գերբնական դարձնում:

Աստված սովորաբար գործում է բնության օրենքների միջակայքում: Երբեմն Աստված որոշում է մի կողմ դնել այդ օրենքները և ինչ-որ գերբնական՝ բնականից այն կողմ, կամ վեր, բան անել: Մենք սրանք կոչում ենք հրաշքներ: Դրանք կատարվում են Աստծո զորությամբ, ոչ թե մարդկային: Երբ դու նայես Աստվածաշնչի հրաշքներին, կամ ներկայումս տեղի ունեցողներին, կարող ես համոզվել, որ Աստծո զորությունն է կատարել, հնարավոր դարձրել այդ հրաշքները՝ գերբնական գործերը:

Գ. Ինչպե՞ս էր Աստված շփվում մարդկանց հետ աստվածաշնչյան ժամանակներում:

Եթե մենք ուզում ենք Աստվածաշունչն ընդունել որպես ճշմարտություն, ապա կարող ենք տեսնել, թե ինչպես էր Աստված խորապես անհանգստացած մարդկանց կյանքի համար: Հին Կտակարանը լի է պատմություններով, որոնք ցույց են տալիս Աստծո սերն ու ողորմությունն Իսրայելի ժողովրդի հանդեպ:

Աստվածաշունչն ինքնին մի օրինակ է, թե ինչպես է Աստված ակտիվ կերպով գործել աշխարհում: Աստվածաշունչը պնդում է, որ ինքն Աստծո Խոսքն է: Այն ընդամենը կրոնական գրքերի ժողովածու չէ: Աստված այս գիրքը գրել է մեր օգտի համար: Ինչո՞ւ: Որովհետև Նա սիրում է մեզ և իրոք հետաքրքրված է, թե ինչ է տեղի ունենում մեզ հետ: Աստվածաշունչը պարունակում է Նրա օրենքները մեզ համար: Եթե մենք հետևենք Նրա օրենքներին, հետաքրքիր և բավարարված կյանք կունենանք:

Երբ Հիսուսն աշխարհ եկավ, Նա Իր անձնական օրինակով ցույց տվեց, թե ինչպես է Աստված ներգրավված աշխարհի մեջ: Նա ապրեց մի ճնշված ազգի սովորական մարդկանց մեջ: Նա սիրեց մերժվածներին ու մեղավորներին, բժշկեց հիվանդներին և մահացավ բոլոր մարդկանց բոլոր մեղքերի համար:

Նախքան մահանալը Հիսուսը խոստացավ, որ կուղարկի Սուրբ Հոգուն, որպեսզի Նա լինի յուրաքանչյուր հավատացյալի հետ: Սուրբ Հոգին Աստված է և այսօր ամբողջապես ներգրավված է մեր կյանքի մեջ՝ որպես ուսուցիչ, առաջնորդ, մխիթարող և մեղքերի համար հանդիմանող: Այսօր Նա շարունակաբար դրսևորում է Աստծո հոգատարությունը և անձնական հետաքրքրությունը մեր աշխարհի հանդեպ:

Դ. Ինչպե՞ս է Աստված օգտագործում Իր գերբնական ուժը:

Արարչագործությունից ի վեր Աստված շատ անգամ է ցույց տվել Իր գերբնական ուժը: Նրա գերբնական գործերը Նրա իրական էության դրսևորումներն են: Նա երբեք չի կորցնում Իր զգացմունքների կառավարումը և բարկության նոպայի մեջ չի ոչնչացնում որևէ քաղաք կամ ազգ երկրի երեսից: Նրա գերբնական հրաշքներից շատերը մարդկանց բժշկելու և պաշտպանելու համար են եղել:

Նա ճանապարհ բացեց Կարմիր ծովի միջով, որպեսզի հրեաները կարողանային փախչել Եգիպտոսի և փարավոնի բանակից: Նա պաշտպանեց Դանիելին, երբ նա մի ամբողջ գիշեր անցկացրեց սոված առյուծների մեջ: Աստված պաշտպանեց Սեդրաքին, Միսաքին ու Աբեդնագովին, երբ նրանց գցեցին վառվող հնոցը: Կրակը չվնասեց նրանց: Իրականում, երբ նրանք դուրս եկան բոցավառվող կրակից, նրանց հագուստներին կրակի հոտ նույնիսկ չէր կպել:

Հիսուսի կյանքը լի է հրաշքներով: Հիսուսը բուժեց կույր մարդկանց, մարդկանց միջից դուրս քշեց դևերին, բուժեց բորոտներին և Ղազարոսին հարություն տվեց մեռելներից: Աստված այսօր էլ շարունակում է հրաշքներ անել: Մարդիկ բժշկվում են, Աստված գերբնական ձևով սնունդ է ապահովում մարդկանց համար և այլ հրաշքներ է գործում:

1. Բոլոր ժամանակների մեծագույն գերբնական դեպքը:

Աստծո գերբնական զորության ամենազարմանահրաշ դրսևորումն այն ճանապարհն է, որը Նա ստեղծեց մեր մեղքերից մեր փրկության համար: Հռոմեացիներին 6.23-ն ասում է, որ մեղքի հատուցումը մահն է: Հռոմեացիներին 3.23-ն ասում է, որ բոլորը մեղք են գործել: Եթե Աստված փրկության ճանապարհ չպատրաստեր, մենք բոլորս մեր մեղքերի համար դատապարտված էինք մահվան և դժոխքի դատաստանի:

Սակայն Աստված Ինքը եկավ աշխարհ՝ ապրելու մեզ հետ և մահանալու մեր մեղքերի համար: Հիսուսի մահվան մեջ ոչ մի գերբնական բան չկար: Նա Աստված էր, սակայն, նախքան մարդ դառնալը, թողեց Իր ողջ զորությունը: Երբ Հիսուսը խաչից կախված էր, զգում էր այն նույն ցավերը, ինչը մեկ ուրիշը կզգար նույն կտտանքների մեջ: Հիսուսը խաչի վրա կրում էր աշխարհի բոլոր մարդկանց բոլոր մեղքերի սարսափելի ցավը: Նրա մահն իրական էր:

Երեք օր անց մենք տեսնում ենք Աստծո գերբնական ուժի ամենազարմանահրաշ դրսևորումը: Հիսուսը հարություն առավ մեռելներից: Նա կրեց մեր մեղքերի ողջ պատիժը: Հավիտենական կյանքի հույսը մարդկության համար հնարավոր դարձավ: Քանի որ Քրիստոսը ողջ է, ապրում է, մենք կարող ենք մեղքերի թողություն ունենալ և ապրել հանդերձյալ կյանքի հույսով: Նրա տված հավիտենական կյանքն ունենալը շատ պարզ է: Այսօր մենք պետք է ընդունենք Նրա առաջարկած փրկությունը:

Հռոմեացիներին 8.11.

«Իսկ եթե Նրա Հոգին, որ հարություն տվեց Քրիստոսին, ձեր մեջ է բնակվում, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի Իր Հոգով, որ բնակվում է ձեր մեջ»:

Փրկությունը յուրաքանչյուր մարդու համար գերբնական գործ է: Ոչ ոք չի կարող փրկվել բարի գործերով: Փրկությունն Աստծո պարգևն է: Նոր կյանքի այս հրաշքը հասանելի է բոլորի համար:

2. Մենք հոգևոր ուժի կարիք ունենք, որպեսզի շարունակենք հավատացյալ լինել:

Փրկությունը հոգևոր ծնունդ է: Մենք հաճախ դա անվանում ենք «վերստին ծնունդ»: Հոգևոր ծնունդը հրաշք է, որը միայն Աստված կարող է անել: Սակայն շարունակել Քրիստոսի համար ապրել՝ դժվարին մարտահրավեր է: Եթե դու Աստծո օգնությունը չունենաս, չես կարողանա հասնել հաջողության: Մենք բոլորս ամեն օր Աստծո ուժի կարիքն ունենք, որպեսզի ապրենք հաջողակ քրիստոնեական կյանքով: Հռոմեացիներին 6-րդ և 7-րդ գլուխներում Պողոսը նկարագրում է մեղքի ուժը, և թե ինչպես են հին սովորություններն ու ցանկություններն ազդում իր կյանքի վրա: Նա ասում է, որ պատերազմը չափից ավելի դժվարին խնդիր է, որպեսզի նա կարողանար իր սեփական ուժերով պայքարել: Հռոմեացիների 8-րդ գլխի սկզբում նա պատմում է, թե ինչպես է մեղքի ստրկությունից անցել հոգևոր ազատության:

Հռոմեացիներին 8.2.

«Որովհետև Քրիստոս Հիսուսի մեջ եղող կյանքի Հոգու օրենքն ինձ ազատեց մեղքի ու մահվան օրենքից»:

Մենք խոստում ունենք, որ Սուրբ Հոգին մեզ հետ կլինի և կօգնի մեզ: Նա չի հարկադրի Իր օգնությունը մեզ, բայց եթե մենք դիմենք Նրա օգնությանը, Նա պատրաստակամ կլինի մեզ օգնելու համար: Աստծո հետ մեր փոխհարաբերությունների մեջ հաստատվելով՝ մենք հոգևորապես ավելի ուժեղ ենք դառնում:

Ե. Աստված ի՞նչ ծրագրեր ունի ապագայի վերաբերյալ:

Աստվածաշունչը հստակ արձանագրում է, որ Աստված չի ավարտել Իր գերբնական գործողությունները: Հիսուսը խոստացել է վերադառնալ Իր բոլոր ճշմարիտ հավատացյալների հետ և հաստատել Իր Արքայությունը երկրի վրա: Մի օր լինելու է մեռելների հարություն բոլոր ճշմարիտ քրիստոնյաների համար: Չարի բոլոր ուժերը կկործանվեն:

Հայտնության գրքի վերջին հատվածը պատմում է ապագա ժամանակների մասին, երբ Աստված կոչնչացնի ներկայիս երկինքն ու երկիրը և նորը կստեղծի: Աստված աշխարհի մեջ անձնապես ներգրավված է եղել և մնում է միշտ: Նա իրոք հոգ է տանում, թե ինչ է տեղի ունենում կյանքում, և առաջարկում է Իր ուժը՝ քեզ օգնելու և քո առջև եղած բոլոր ճակատամարտերը հաղթահարելու համար:

Գլուխ 2.

Ի՞նչ է հոգևոր զորությունը:

Ա. Հոգևորապես թույլ լինելու իրականությունը:

Եթե դու ճշմարիտ քրիստոնյա լինելու որոշում ես կայացրել, ապա պետք է իմանաս, որ անհնար է շարունակել հավատարիմ լինել Հիսուս Քրիստոսին: Սպասի՛ր, կա ավելին: Եթե դու փորձես Հիսուս Քրիստոսին հավատարիմ ապրել քո սեփական կարողությամբ, վաղ թե ուշ կձախողվես, հավանաբար՝ շատ շուտով: Մենք պետք է Աստծուց ուժ ստանանք, որպեսզի կարողանանք հավատարիմ մնալ Նրան: Նա խոստացել է մեզ հետ լինել, օգնել ու առաջնորդել մեզ: Ներքուստ մենք ինքներս թույլ ենք: Իսկ մեր շուրջը եղած փորձությունները շատ ուժեղ են:

Պողոսը՝ բոլոր ժամանակների մեծագույն առաքյալներից (միսիոներ) մեկը, հոգևոր մեծ ուժի տեր մարդ էր: Բայց և այնպես, նա նույնպես խոստովանեց, որ հոգևորապես տկար է: Պողոսի դեպքում՝ Աստված նրա կյանքում մի խնդիր էր տվել, որպեսզի նա միշտ հիշեր, որ պետք է շարունակ Աստծուց կախված լիներ: Պողոսը երեք անգամ խնդրեց Աստծուն, որ Նա հեռացնի այդ խնդիրն իր կյանքից, սակայն Աստված ասաց՝ «Ո՛չ»:

Բ Կորնթացիներին 12.9-10.

«Եվ Նա ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ բավական է, որովհետև Իմ զորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում»: Հետևաբար, ավելի շուտ ուրախությամբ իմ տկարություններով կպարծենամ, որ Քրիստոսի զորությունը բնակվի իմ մեջ: Այդ պատճառով տկարությունների, նախատինքների, կարիքի, հալածանքների ու նեղությունների հոժար եմ Քրիստոսի համար, որովհետև, երբ ես տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր»:

Մենք պետք է մշտապես ապավինենք Աստծուն, հավատանք, որ Նա կօգնի մեզ: Պողոսը շատ խելացի մարդ էր, կրթված և հրաշալի առաջնորդ: Բայց և այնպես, նա երբեք չհասավ մի աստիճանի, որ ասեր. «Հիմա ես հոգևորապես այնքան ուժեղ ու հասուն եմ, որ այլևս կարիք չունեմ Աստծուն ապավինել՝ ուժ ունենալու համար»: Մենք կարիք չունենք վախենալու՝ մեր տկարությունների համար, այլ պետք է անկեղծ լինենք Աստծո օգնության կարիքն ունենալու հարցում: Մենք վստահությամբ կարող ենք դիմել Աստծուն օգնության համար: Տերը Պողոսին ասաց. «Ես քեզ հետ եմ. սա է քո ողջ կարիքը»: Աստծո այս ուղերձը ճշմարիտ է մեզնից յուրաքանչյուրի համար: Մենք թույլ ենք, բայց Աստված մեզ հետ է:

Բ. Ի՞նչ է ճշմարիտ հոգևոր զորությունը:

Ինչպե՞ս դու կպատասխանեիր այս հարցին. «Ի՞նչ է ճշմարիտ հոգևոր զորությունը»:

Միգուցե էլեկտրականությունը կարող է լավ օրինակ լինել: Ի՞նչ կպատասխանեիր դու, եթե ինչ-որ մեկը քեզ հարցներ. «Ի՞նչ է իրականում էլեկտրականությունը»: Եթե դու էլեկտրականության ինժեներություն ես սովորել, քեզ համար սա կարող է շատ հեշտ հարց լինել: Սակայն մեծամասնության համար էլեկտրականության բնութագրիչներն այնքան էլ հստակ չեն, թեև մեզնից շատերը գիտեն, թե ինչ է էլեկտրականությունը՝ ելնելով այն բանից, թե ինչ է այն անում մեզ համար: Մենք այն օգտագործում ենք մեր առօրյայում, իսկ երբեմն երբ պատահաբար դիպչում ենք դրան, ապա երկար ժամանակ չենք մոռանում: Եվ չնայած այն բանին, որ ամենայն մանրամասնությամբ չենք հասկանում էլեկտրականությունից, մենք ամեն օր օգտագործում ենք այն:

Հոգևոր զորությունը բացատրելու ձևերից մեկը քննելն է, թե ինչպես այն կարող է օգտագործվել հավատացյալի կյանքում: Այն պետք է ***օգտագործվի,*** սա է Աստծո՝ հոգևոր զորության վերաբերյալ գլխավոր ճշմարտությունը: Աստված Իր զորությունը քեզ չի տվել, որ դու այն դնես բանկում: Նա այդ ուժը քեզ տվել է, որպեսզի այն օգտագործես քո առօրյա կյանքի տարբեր իրավիճակներում:

Մենք արդեն գիտենք, թե ինչ է նշանակում հոգևորապես տկար լինել, երբ չունենք բավարար ուժ՝ դեմ կանգնելու փորձություններին, կամ հնազանդվելու Աստվածաշնչի բոլոր պատվիրաններին: Օրինակ, դու կարող ես սենյակակից ընկեր կամ հարևան ունենալ, ում հետ դժվար է յոլա գնալ: Դու գիտես, որ քո սեփական կարողությամբ չունես այնքան ուժ, որպեսզի ամեն օր սեր ցույց տաս տվյալ անձնավորությանը: Աստծո զորությունը քո տրամադրության տակ է այս տեսակ կարիքների համար:

Հենց այս պահին հոգևոր ճշմարիտ ուժի վերաբերյալ քո ընկալումը, հնարավոր է, ավելի շատ հարցերով է լցված, քան պատասխաններով: Այս դասընթացն անցնելիս մենք հույս ունենք, որ Աստծո զորության վերաբերյալ քո հասկացողությունն ավելի կհստականա, և դու կտեսնես, թե ինչպես կարող ես ամեն օր այն օգտագործել քո կյանքում:

Գ. Ի՞նչ է նշանակում հոգևորապես ուժեղ լինել:

Մի քանի ձևով կարելի է նկարագրել այն ուժը, որն Աստված ուզում է, որ յուրաքանչյուր հավատացյալ ունենա:

1. Դու լուրջ որոշում ես կայացրել՝ ապրել Հիսուսի համար:

Հոգևորապես ուժեղ մարդն ամուր որոշում է կայացնում՝ ծառայել Հիսուս Քրիստոսին: Այս որոշումն ավելի կարևոր է, քան ընկերները, փողը կամ հաջողությունը: Այս անձնավորությունն ավելի շուտ պատրաստ է մահանալ, քան ուրանալ Հիսուս Քրիստոսին: «Մի րոպե,- կասես դու,- ես սիրում եմ Հիսուսին, բայց կարիք կա՞ մեռնելու, որպեսզի ապացուցեմ, որ հոգևորապես ուժեղ եմ»: Իհա՛րկե, ոչ: Սակայն նրանք, ովքեր հոգևորապես ուժեղ են, խորը նվիրվածություն ունեն Քրիստոսի հանդեպ:

Որոշ հավատացյալներ պատրաստ են ապրել Հիսուսի հետ, քանի դեռ կյանքը հարթ է, և մեծ խնդիրներ չկան: Կիրակի օրը նրանք գնում են եկեղեցի և աղոթում են: Բայց երեքշաբթի օրը ուրիշ անձնավորություն են դառնում:

Նրանք շատ խնդիրներ են ունենում, բայց հայհոյանքով ու խմիչքով են փորձում լուծել իրենց հարցերը: Նրանք հոգևորապես ուժեղ չեն: Նրանք պետք է որոշում կայացնեն՝ 100%-ով ծառայել Քրիստոսին, կամ իրենք իրենց: Միայն կիրակնօրյա հավատացյալ լինելը բավական չէ: Հոգևորապես ուժեղ մարդն իր կյանքը Հիսուս Քրիստոսին նվիրելու որոշում է կայացնում և Քրիստոսին դնում է իր կյանքում առաջին տեղը:

2. Դու քո որոշումները կայացնում ես՝ սկզբում նայելով, թե ինչ է Աստվածաշունչը քեզ ասում, որ անես:

Ամեն օր մենք ստիպված ենք որոշումներ ընդունել: Ինչպե՞ս կայացնել որոշումներ: Հոգևորապես ուժեղ մարդը թույլ չի տալիս, որ իր զգացմունքները ղեկավարեն իր որոշումները: Դու չպետք է թույլ տաս, որ քո ցանկությունները, կամ ընկերների կարծիքները ղեկավարեն քո որոշումները:

Հոգևորապես ուժեղ լինել՝ նշանակում է անհանգստանալ, թե ինչ է Աստված ուզում, որ դու անես: Դու ձգտում ես ուսումնասիրել Աստվածաշունչը և գտնել գործնական ուղեցույցներ որոշումներ կայացնելու համար: Դու չես ուզում լինել քո սեփական ղեկավարը: Դու ուզում ես, որ Հիսուս Քրիստոսը լինի քո կյանքի Առաջնորդը, դրա համար էլ ուզում ես բացահայտել, թե ինչ է Հիսուսն ուզում, որ անես:

Դու պատրաստ ես առանձնանալ Աստծո հետ, եթե կարիք կա: Իր քարոզներից մեկում Հիսուսը խոսում է այն մարդկանց մասին, ովքեր իրենց ցանկություններն Աստծուց առաջ են դնում: Հիսուսի պատասխանն այսպիսին էր. «Բայց դուք նախ խնդրեցե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ» (Մատթեոս 6.33):

Եթե դու հոգևորապես ուժեղ լինես, քեզ կհետաքրքրի, թե ինչ է Աստված մտածում քո կայացրած յուրաքանչյուր որոշման մասին: Սա չի նշանակում, որ դու պետք է ամեն անգամ Աստծուց ձայն լսես՝ նախքան որևէ փոքրիկ որոշում կայացնելը: Սակայն Աստվածաշունչը լի է խորհուրդներով, որոնք վերաբերում են մեզ հանդիպող հիմնական որոշումներին: Գլխավոր հարցը սա է. «Դու իրո՞ք ուզում ես, որ Աստված լինի քո ամենօրյա կյանքի ղեկավարը»:

3. Աղոթքը քո կյանքի մի կարևոր մասն է:

Աղոթքը խոսակցություն է Աստծո հետ և, միաժամանակ, հնարավորություն է, որ Աստված խոսի քեզ հետ: Հոգևորապես ուժեղ մարդիկ մեծ արժեք են տալիս աղոթքին: Ա Թեսաղոնիկեցիներին 5.17-ն ասում է՝ «Անդադար աղոթեցե՛ք»: Սա չի նշանակում, որ ամեն րոպե պետք է խոսես Աստծո հետ: Սակայն օրվա ընթացքում քո մտքերը հաճախ պետք է ուղղես Աստծուն և խոսես Նրա հետ. լինի բարձրաձայն, թե ցածրաձայն՝ մտքում: Աղոթքը քեզ օգնում է միանալ հոգևոր զորության աղբյուրի՝ Աստծո հետ:

Աստվածաշունչն ասում է, որ Աստված հետաքրքրվում է մեր աղոթքներով: «Որովհետև Տիրոջ աչքն արդարների վրա է, և ականջները՝ նրանց աղոթքին. սակայն Տիրոջ երեսը չարագործների դեմ է» (Ա Պետրոս 3.12): Եթե ուզում ես հոգևորապես ուժեղ լինել, Աստծո հետ զարգացրո՛ւ այնպիսի փոխհարաբերություն, որտեղ աղոթքն օրվա ընթացքում կարևոր տեղ ունի:

4. Դու սովորում ես Աստծուն լսել քո հոգու միջոցով:

Մեզնից շատերի համար Աստծուն աղոթելը շատ հեշտ է: Իսկ որքա՞ն հեշտ է քեզ համար Նրան լսելը: Ե՞րբ ես վերջին անգամ լսել Աստծո ձայնը, որ խոսել է քեզ հետ: Որտեղի՞ց գիտես, որ դա Աստծո ձայնն էր: Ինչպե՞ս է Աստված այսօր խոսում մարդկանց հետ:

Աստված հոգի է: Նա մեզ այնպես է ստեղծել, որ մեզնից յուրաքանչյուրը հոգի ունի: Երբ մենք մեղքի մեջ ենք ապրում, Աստվածաշունչն ասում է, որ հոգևորապես մեռած ենք: Երբ մենք դառնում ենք ճշմարիտ քրիստոնյա, Աստված նոր կյանք է բերում մեր հոգու մեջ: Ահա թե ինչու են հավատացյալները հաճախ խոսում վերստին ծնվելու մասին: Մեր հոգին է վերստին ծնվում: Դա մեր ինքնության այն հատվածն է, որտեղ Աստված է ապրում:

Հռոմեացիներին 8.16.

«Հոգին Ինքը վկայություն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստծո որդիներ ենք»:

Մենք պետք է սովորենք լսել Աստծուն, երբ Նա խոսում է: Ամենաընդունված ձևերից մեկը, որով Աստված մեզ հետ խոսում է, Աստվածաշունչն է՝ Նրա Խոսքը: Աստվածաշունչ կարդալիս Նա մեզ կօգնի գտնել գործնական ձևեր, որպեսզի անենք այն, ինչ Նա է ուզում, որ մենք անենք: Աստված շատ հազվադեպ է բարձրագոչ ձայնով խոսում մարդկանց հետ: Սովորաբար դա մի «մեղմ, քնքուշ ձայն է» մեր հոգու մեջ: Մենք պետք է սովորենք լսել Աստծուն: Սա Աստծո հետ խորը փոխհարաբերություն ունենալու կարևոր հանգամանքներից մեկն է:

5. Դու Աստծուն սիրում ես ավելի, քան մարդկանց, կամ ուրիշ բաներ:

Երբ Աստված մեզ Իր օրենքներն էր փոխանցում, երկու օրենքներ առանձնացրեց՝ որպես ամենակարևորները: Աստծո ամենակարևոր օրենքներից առաջինն է՝ սիրել Աստծուն ամբողջ սրտով, հոգով, մտքով ու զորությամբ: Իսկ երկրորդը՝ սիրել ընկերոջը քո անձի պես (Տե՛ս Մարկոս 12.29-31): Նա, ով ուզում է հոգևորապես ուժեղ լինել, պետք է սովորի սիրել Աստծուն, ինչպես նաև՝ բոլոր մարդկանց:

Աստծո հանդեպ քո սերը պետք է ավելին լինի, քան այս աշխարհում որևէ անձի կամ նյութի հանդեպ: Կարևորն այստեղ առաջնահերթությունն է: Ի՞նչն է քեզ համար ամենակարևորը քո կյանքում: Եթե Աստված ամենակարևորն է, ապա դա կերևա Նրա հանդեպ քո սիրուց: Քո կյանքի մեծագույն նպատակը կլինի Նրան սիրելը:

6. Դու սովորում ես հաղթահարել մեղքի գայթակղությունները:

Հոգևորապես ուժեղ մարդը կյանքի փորձությունների միջոցով սովորում է դեմ կանգնել գայթակղություններին: Սատանան հարձակվում է բոլոր հավատացյալների վրա և փորձում է վհատեցնել, որպեսզի հավատանք, որ ձախողակ ենք: Սակայն Աստված խոստացել է մեզ հետ լինել: Նա նաև խոստացել է մեզ ելք ցույց տալ ցանկացած փորձությունից, որը մեզ կհանդիպի:

Ա Կորնթացիներին 10.13.

«Դուք ոչ մի այլ փորձության չեք ենթարկվել, բացի դրանից, ինչ հատուկ է մարդուն. բայց Աստված հավատարիմ է և չի թողնի ձեզ, որ ձեր կարողությունից ավելի փորձվեք, այլ փորձության հետ կտա նաև ազատվելու միջոց, որ կարողանաք այն կրել»:

Հոգևորապես ուժեղ մարդն ուզում է հաղթահարել մեղքի փորձությունները: Հոգևորապես թույլ մարդիկ երբեմն ուզում են մասնակից լինել իրենց հանդիպած մեղքին: Նրանք որոշում են անտեսել Աստծո օգնությունը և գիտակցաբար մասնակցել մեղքին: Եթե դու ուզում ես հոգևորապես ուժեղ դառնալ, պետք է հետևես Ա Պետրոս 3:11-ի խորհրդին՝ «Թող հետ քաշվի չարությունից և բարություն անի, խաղաղություն փնտրի ու գնա դրա հետևից»:

Հակոբոսը մեկ այլ խորհուրդ է տալիս, թե ինչպես հոգևորապես ուժեղ դառնալ: Փորձությունները հավատացյալի համար վատ բան չեն: Դրանք մեծ հնարավորություն են ընձեռում հոգևոր աճի համար, եթե դրանց արձագանքենք Աստծո ուզած ձևով:

Հակոբոս 1.2-4.

«Եղբայրնե՛րս, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք, իմանալով, որ ձեր հավատի փորձությունը համբերություն է առաջ բերում: Սակայն համբերությունը թող կատարյալ արդյունք ունենա, որպեսզի կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք»:

Այս համարները քո կյանքում գործի դնելու վերջնական արդյունքը հոգևոր ուժն է: Սակայն հոգևոր աճի համար կարճ ճանապարհներ չկան: Մենք բոլորս հանդիպում ենք փորձությունների և գայթակղությունների: Մեր արձագանքն է որոշում, թե որքան արագ մենք կաճենք հոգևորապես: Եթե Աստծո ուզած ձևով արձագանքենք, մեր մեջ հոգևոր ուժ կզարգանա:

7. Քո կյանքը ցույց է տալիս «Սուրբ Հոգու պտուղը»:

Եթե դու իրոք ուզում ես, որ Աստված առաջինը լինի քո կյանքում, ապա կաշխատես քո մեջ զարգացնել Աստծո ուզած հատկությունները: Երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, Սուրբ Հոգին գալիս և բնակվում է քո հոգու մեջ: Սակայն դու Նրան պետք է թույլ տաս, որ ազդի քո կյանքի և վերաբերմունքների վրա:

Երբ դու վարվես այնպես, ինչպես Նա է ուզում, որ ապրես, ապա կսկսես դրսևորել «Հոգու պտուղը», որի մասին գրված է Գաղատացիներին 5.22-23-ում. «Բայց Հոգու պտուղն այս է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն»: Սուրբ Հոգին քեզ կօգնի զարգացնել այս հատկությունները քո կյանքում, բայց դու պետք է Նրա հետ միասին աշխատես այդ ուղղությամբ: Համագործակցությունն առանցքային նշանակություն ունի այստեղ:

Դ. Մի՛ փորձիր կրկնօրինակել Աստծո զորությունը:

Հոգևոր զորությունը, որն Աստծուց է գալիս, հասանելի է բոլոր հավատացյալների համար: Ոչ ոք չի կարող երկար ժամանակ նմանակել Աստծո զորությանը: Ճշմարիտ հոգևոր ուժն ի վիճակի է դեմ կանգնել ցանկացած փորձության, որ սատանան կարող է բերել հավատացյալի կյանքում: Ցանկացած մարդ, ով կփորձի կրկնօրինակել Աստծո զորությունը, շուտով կհայտնաբերի, որ սատանայի ուժն իրական է և շատ ավելի հզոր է, քան իր ստեղծած արհեստական ուժը: Գործք 19-րդ գլուխը մեզ պատմում է Սկևայի յոթ որդիների մասին, ովքեր փորձում էին գերբնական գործեր կատարել՝ առանց Աստծո ճշմարիտ ուժն իրենց մեջ ունենալու:

Գործք 19.13,15-16.

«Եվ թափառական հրեաներից ոմանք, որ երդվեցնողներ էին, հանդգնեցին Տեր Հիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողների վրա և ասել. «Ձեզ երդվեցնում ենք Հիսուսով, որին Պողոսն է քարոզում»:
Իսկ չար ոգին պատասխանեց և ասաց. «Հիսուսին ճանաչում եմ և Պողոսին գիտեմ, իսկ դուք ո՞վ եք»: Եվ այն մարդը, ում ներսում էր չար ոգին, նրանց վրա հարձակվելով՝ բռնեց նրանց, գետնին տապալեց, հաղթահարեց, մինչև նրանք մերկ ու վիրավոր փախան այդ տնից»:

Մի՛ փորձիր նմանակել Աստծո հոգևոր զորությանը: Ունեցի՛ր Նրա իրական զորությունը: Մենք ճշմարիտ հոգևոր զորության կարիք ունենք, որպեսզի հաղթահարենք առօրյա կյանքում մեզ հանդիպող հոգևոր մարտերը: Մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի տարբերենք հոգևոր պատերազմը և այն խնդիրները, որոնք հոգևոր չեն:

Դու հոգևոր զորության կարիք չունես քո կոշիկի կապը կապելու կամ լվացվելու համար: Դրա համար հարկավոր է ֆիզիկական կարողություն և մի փոքր հմտություն: Նույնիսկ երեխաները վաղ տարիքում կարող են սովորել այդ տարրական գործողություններն անել: Սակայն մենք իրոք կարիք ունենք հոգևոր զորության, որպեսզի դեմ կանգնենք մեղքի փորձություններին: Եթե դու աշխատում ես այնպիսի մարդու հետ, ով շարունակ բարկացնում է քեզ, Աստծո ճշմարիտ զորության կարիքը կա, որպեսզի կարողանաս իրոք սիրել տվյալ անձնավորությանը:

Ամեն անգամ, երբ հարբեցող մարդը գարեջուր է տեսնում, Աստծո զորության կարիքն ունի այդ գայթակղությանը դիմանալու համար:

Ե. Հոգևորապես ուժեղ կյանք ունենալու չորս բանալիները:

Հոգևոր ուժը հավատացյալների կյանքում ինքնաբերաբար չի գալիս: Աստված կգործի և կզորացնի քեզ, երբ դու իրականացնես քո պարտականությունները՝ որպես Նրա զավակ և հետևորդ: Չորս առանցքային բառեր նկարագրում են հոգևոր ուժի զարգացման մի քանի կարևոր մասեր: Այդ չորս բառերը՝ **հավատ, հավատալիք, հույս** և **վստահություն**, հաճախ ճիշտ չեն հասկացվում և ճիշտ չեն օգտագործվում հոգևոր շրջանակներում: Մեր նպատակն այստեղ այն չէ, որ կատարյալ սահմանում տանք այս բառերից յուրաքանչյուրի համար: Մենք ընդամենն ուզում ենք ներկայացնել յուրաքանչյուր բառի ճիշտ բնութագիրը, որպեսզի ցույց տանք, թե ինչով են դրանք իրարից տարբերվում: Մենք նաև ուզում ենք տեսնել, թե որքանով են դրանք նպաստում հավատացյալի կյանքում հոգևոր ուժ զարգացնելուն:

1. Հավատալիք:

Հավատալիքը փաստերի հետ համաձայնելն է: Օրինակ՝ «Ես հավատում եմ, երբ դու ասում ես, որ վառարանը տաք է»: Բոլորն էլ կարող են հավատալ: Սա մի բան է, որ մենք անում ենք մտքով: Սակայն մեր խոսքն այնպիսի հավատալիքի մասին է, որը կարևոր մաս է կազմում քո կյանքում հոգևոր ուժ զարգացնելու մեջ: Սա ավելին է, քան ինչ-որ բանի հավատալը. այն ներառում է հավատալն այն ամենին, ինչ Աստված է ասում Աստվածաշնչում: Դու պետք է որոշես հավատալ, որ Աստվածաշունչը ճշմարիտ է:

Հավատալիքի մեկ այլ բաժին է այն, թե ինչպես է հավատալիքը զարգանում քո կյանքում: Դու կարող ես հավատալ, այսինքն՝ ընդամենը մտքով համաձայնել, որ ինչ-որ բան ճիշտ է: Սակայն հավատալիքի զարգացումը լինում է նաև փորձառության միջոցով: «Ես հավատում եմ, որ կարող եմ բարձրացնել այդ ծանրությունը» արտահայտությունը կարող է լավ հնչել, սակայն իրական ապացույցը կլինի, երբ դու այն կբարձրացնես: Եթե քո անձնական փորձառությամբ համոզվել ես, որ կարողանում ես դրանից ավելի ծանր բաներ բարձրացնել, ապա կարող ես վստահությամբ ասել. «Ես հավատում եմ, որ կարող եմ բարձրացնել այդ ծանրությունը»:

Փորձառության վրա հիմնված հավատալիքները շատ ավելի մեծ ազդեցություն կարող են ունենալ՝ քո կյանքում հանդիպող նոր խնդիրների և մարտահրավերների դեպքում քեզ օգնելու հարցում:

Նկատի ունենալով որոշ մարդկանց անցած կյանքը՝ Աստծուն և Աստվածաշնչին հավատալը նրանց համար կարող է դժվար լինել: Քիչ չեն մարդիկ, որոնք մեծացել են բազմաթիվ կրոնական ուսմունքների խառնուրդի միջավայրում, սակայն նրանք տեղյակ չեն, թե որքան խառն են նրանց հավատալիքները: Մարդը հեշտությամբ կարող է սխալ հավատալիքներ ունենալ՝ առանց գիտակցելու, որ դրանք սխալ են: Ահա թե ինչու է կարևոր՝ ամեն օր Աստվածաշունչն օգտագործել մեր հավատալիքների համար:

2. Վստահություն:

Վստահությունն ավելին է, քան ընդամենը հավատալը. դա վստահություն է մեկ այլ անձնավորության հանդեպ: Դու ինչ-որ չափով կախվածություն ես զգում այդ անձից: «Ես երեկոյան գումարը կբերեմ»,- ասում է Գեղամը: Դու կարող ես որոշել՝ հավատալ նրա ասածին, կամ էլ որոշել՝ չհավատալ նրան: Դո՛ւ պետք է որոշում կայացնես: Կվստահե՞ս նրա ասածին, թե՞ կորոշես չվստահել: Վստահությունը մարդկանց մեջ սովորաբար ձևավորվում է ժամանակի ընթացքում: Որքան վստահելի և ազնիվ է քո դիմացինը, այնքան հեշտ է նրան վստահելը:

Դու կարող ես վստահություն ունենալ նաև իրերի հանդեպ: Ես վստահում եմ այս աթոռին: Ամեն անգամ, երբ ես նստում եմ դրա վրա, այն առանց կոտրվելու պահում է իմ ծանրությունը: Տարբեր աթոռների վրա նստելու փորձառություն ունենալով՝ մենք սովորաբար մտնում ենք անծանոթ գրասենյակ և նստում ենք առաջարկված աթոռի վրա այն վստահությամբ, որ այն չի կոտրվի: Բայց և այնպես, եթե աթոռը ծռմռված է կամ մի ոտքը թեքված, դու այնքան էլ վստահ չես լինի, որ նստելով դրա վրա՝ այն չի կոտրվի: Կամ եթե քո կյանքում եղել է դեպք, երբ նստելիս աթոռը կոտրվել է, դու, հնարավոր է, ավելի ուշադիր զննես աթոռը՝ նախքան դրա վրա նստելը:

Վստահությունը մտային որոշում է, որը շատ նման է հավատալուն: Սակայն վստահությունն ավելի խորն է. դա սրտի որոշում է: Ամեն անգամ ինչ-որ բանի վստահելիս դու որոշում ես կայացնում այդպես անելու: Ոմանք դժվարանում են ընդհանրապես վստահել մարդկանց, որովհետև անցյալում ցավ են ստացել նրանցից, ում իրենք վստահել են: Հնարավոր է՝ դու ունեցել ես ընկերներ, որոնցից հիասթափվել ես՝ քեզ խաբելու կամ քեզնից գողանալու պատճառով: Կամ գուցե նրանք չեն պահել քեզ տված իրենց խոստումը: Քո վստահությունը տվյալ մարդկանց հանդեպ խախտվել է:

Նրանց համար, ովքեր վստահելու հետ կապված խնդիր ունեն, հավանաբար շատ դժվար լինի Աստծուն վստահելը: Նրանց կյանքում, հնարավոր է, մեծ արգելքներ լինեն, որոնք կխանգարեն վստահել մարդկանց:

Նրանք, ովքեր դժվարանում են վստահել Աստծուն, ասում են. «Ես չեմ տեսնում Աստծուն: Նա երբեք լսելի ձայնով չի խոսում ինձ հետ: Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ, որ Նա իրական է: Ինչպե՞ս ես կարող եմ վստահել Աստծուն»:

Վստահությունը որոշում է: Մարդուն վստահելիս դու ինչ-որ բան վտանգում ես: Սակայն Աստծուն վստահելու մեջ ոչ մի վտանգ չկա: Աստված շատ լավ բնութագիր ունի: Դու կատարելապես կարող ես վստահել Նրան: Նա քեզ երբեք չի լքի: Երբ դու տեսնես, որ Աստված գործում է քո կյանքում և օգնում է քեզ՝ հաղթահարել փորձություններն ու խնդիրները, ավելի շատ պատճառ կունենաս Նրան վստահելու:

3. Հույս:

Եթե վստահությունը կառուցվում է անցյալի վրա, ապա հույսը նայում է ապագային: Հույսն ակնկալիք է, որ ապագայում ինչ-որ բան տեղի կունենա: Հույսն ու վստահությունը սերտորեն կապված են իրար հետ: Սակայն հույսը միշտ առաջ է նայում: Չես կարող հույս ունենալ, որ կուտես երեկ: Դու կարող ես հիշել, թե ինչ է տեղի ունեցել և ասել. «Ես երեկ ճաշեցի»: Դրա համար ընդամենը պետք է հավատալ: Իսկ վաղվա՞ համար, կամ երեկոյա՞ն: Դու կկարողանա՞ս այդ ժամանակ ուտել: Այստեղ հույս է պետք: Եթե դու ոչ գումար ունես, ոչ էլ անհրաժեշտ մթերք, ապա իրոք հարցեր կունենաս՝ կապված քո հաջորդ ճաշի հետ: Սակայն եթե դու տանը տարատեսակ ուտելիքներ ունես և գումար՝ քո գրպանում, ապա առանձնապես հույսի կարիք չկա, երբ ծրագրում ես քո հաջորդ ճաշը:

Օրինակ՝ եթե դու 5.000 դրամ պարտքով տվել ես ընկերոջդ, իսկ նա ասել է, որ երեկոյան կվերադարձնի: Այս պարագայում, հնարավոր է, հույսը շատ ավելի է պետք, հատկապես եթե դու իրո՛ք այդ գումարի կարիքն ունես առավոտյան ժամը 8-ին:

Հույսը, որն իր հետևում ուժ չունի, քիչ արժեք ունի: Աստվածաշունչը բավականին շատ բան ունի ասելու հույսի մասին: Հռոմեացիների թղթում Պողոսը խոսում է այն մասին, թե ինչպես մենք կարող ենք հույս զարգացնել, որը կապ ունի Աստծո հետ: Հույսի այս ուղին հեշտ չէ, այն անցնում է խնդիրների և դժվարությունների միջով:

Հռոմեացիներին 5.3-5.

«Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև պարծենում ենք նեղությունների մեջ՝ գիտենալով, որ նեղությունը համբերություն է առաջ բերում, և համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Եվ հույսը չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը մեր սրտերում սփռված է Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ տրվեց»:

Սաղմոս 33.20-22.

«Մեր անձը սպասում է Տիրոջը: Նա է մեր օգնությունն ու մեր վահանը: Քանի որ մեր սրտերը Նրանով են ուրախանալու, որովհետև Նրա սուրբ անվանը հուսացինք: Ո՛վ Տեր, Քո ողորմությունը թող մեզ վրա լինի, ինչպես որ մեր հույսը Քո վրա է»:

Հույսը հավատացյալի կյանքում մեծ կարևորություն ունի: Այս աշխարհից հեռանալիս Հիսուսն ասաց, որ կվերադառնա և մեզ երկինք կտանի: Եթե մենք մահանանք նախքան Նրա վերադառնալը, Նա մեզ խոստացել է, որ մահից հետո հավիտենական կյանք կունենանք: Մենք մեր հույսը դնում ենք Հիսուսի խոսքերի վրա: Որոշ հավատացյալներ մեծ նեղություններ են ունենում, թեև իրենց հույսը դրել են Քրիստոսի վրա: Հազարավոր մարդիկ Աստծո հանդեպ իրենց հավատի պատճառով շատ դժվարին իրավիճակներով են անցնում: Այս մարդիկ հույս ունեն, որ մահից հետո կյանքը շատ ավելի լավն է լինելու, քան լավագույն կյանքը երկրի վրա: Տե՛ս Եբրայեցիներին 11-րդ գլուխը:

4. Հավատ:

Եթե դու հավատ բառը նայես մեծ բառարանում, տարբեր սահմանումներ կգտնես այնտեղ: Հնարավոր է՝ այնտեղ որպես հոմանիշ գտնես հետևյալ բառերը՝ հավատալիք, հույս, վստահություն: Արդյո՞ք այս բառերը նույն բանն են նշանակում: Այս չորս բառերը շատ մոտ են իրար որոշ իմաստով: Բայց և այնպես, հավատ բառն այսօր օգտագործվում է այդ բոլոր բառերի իմաստը նկատի ունենալու համար:

Երբ դու ասում ես՝ «Ես հավատում եմ, որ այս աթոռը կարող է պահել իմ ծանրությունը, եթե նստեմ դրա վրա», դա կարծես նույնն է՝ ինչ վստահությունը: Երբ երեխան գալիս է և մորն ասում՝ «Մա՛մ, ես իմ սենյակը մաքրեցի», մայրիկը կարող է պատասխանել. «Ես հավատում եմ քեզ»: Բայց դրա փոխարեն նա կարող էր նաև ասել՝ վստահում եմ, որը նույն իմաստը կփոխանցեր:

Բայց և այնպես, մենք ուզում ենք այս դասից ավելի ճիշտ գաղափար վերցնել այն բանի վերաբերյալ, թե ինչ նկատի ունի Աստվածաշունչը, երբ օգտագործում է հավատ բառը: Հիսուսն ասաց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք. «Տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ»: Եվ այն կտեղափոխվի, և ոչինչ անհնար չի լինի ձեզ համար» (Մատթեոս 17.20): Միանգամայն պարզ երևում է, որ Հիսուսն այստեղ ավելին նկատի ունի, քան պարզապես մտքով հավատալը, որ կարող ես զարմանահրաշ մի գործ անել: Եթե հավատը նույնը լիներ, ինչ՝ հավատալիքը, և եթե համարը դա է ասում, ապա ցանկացած մարդ կկարողանար սարեր ու բլուրներ տեղափոխել առանց հզոր տրակտորների և այլ տեխնիկաների:

Աստվածաշնչում «հավատ» բառը մի քանի տարբեր իմաստներով է օգտագործվում: Երբեմն թվում է՝ այն ըստ էության նույն բանն է նշանակում, ինչ՝ «հավատալիքը»: Մյուս համարներում այն նշանակում է՝ արժանահավատ կամ հուսալի: Համենայնդեպս, Հիսուսի ուսուցումներն ու ծառայությունը հավատի մի առանձնահատուկ հատկանիշ են ի հայտ բերում: Ներքևում նշված սահմանումը հավատի բոլոր կողմերը ներառելու նպատակ չունի, այլ՝ միայն մեկ հատկանիշ, որով այն տարբերվում է հավատալիքից, հույսից ու վստահությունից:

Հավատն Աստծուց տրված ուժ է, որը միշտ մղում է գործողության:

Հավատը հոգևոր զորության առանցքային մասն է: Երբ Հիսուսը խոսում էր հավատն օգտագործելով սարեր տեղափոխելու մասին, Նա հենց նոր էր բուժել մի դիվահար տղայի: Նրա աշակերտները նախքան Նրա գալը չէին կարողացել այդ դևին դուրս քշել: Երբ նրանք հարցրին, թե ինչո՛ւ չկարողացան դա անել, Հիսուսը պատասխանեց. «Ձեր թերահավատության պատճառով» (Մատթեոս 17.20):

Եկեք այս սահմանումը կիրառենք այն դեպքի համար, որը տեղի ունեցավ Մատթեոս 17.14-21-ում: Դիվահար մարդուն բուժելն ավելին է պահանջում, քան մտային ուժը: Նման դեպքերում Աստծո գերբնական զորության կարիքը կա: Հիսուսն աղոթեց այդ հիվանդ տղայի համար, և նա անմիջապես առողջացավ: Հիսուսն Աստծուց ստացած զորություն ուներ, որը բերեց գործողության: Տղան ակնթարթորեն բուժվեց: Սկզբում աշակերտներն էին աղոթել այդ տղայի համար, բայց բժշկություն տեղի չէր ունեցել: Աստծո հավատը ներկա չէր եղել աշակերտների մեջ: Նախքան այդ տղայի համար աղոթելը աշակերտները հավատո՞ւմ էին, որ կարող են բժշկություն բերել նրա կյանքում: Սուրբ Գիրքը հստակ չի ասում, բայց, հավանաբար, նրանք զգում էին, որ կարող են, որովհետև աղոթեցին այդ տղայի համար:

Ավետարաններին անդրադառնալով՝ մենք տեսնում ենք, որ Հիսուսը հավատի մասին խոսում էր այն իմաստով, որ այն ներառում է գերբնական գործեր և հրաշքներ: Եփեսացիներին 2.8-9-ն ասում է. «Որովհետև շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարգևն է. 9. ոչ թե գործերից, որպեսզի ոչ մեկը չպարծենա»: Հավատալիքն ընդամենը ջանք է քո կողմից: Եթե դու ուզում ես քո մեղքերից փրկվել, պետք է ընդունես և հավատաս, որ Աստված կարող է դա անել քեզ համար: Սակայն այս համարները նաև ասում են, որ հավատն է (որ Աստծո զորությունն է) վերցնում քո մեղքերը, ոչ թե քո մտային ուժը: Փրկությունը ճիշտ այնպիսի հրաշք է, ինչպես ցանկացած այլ հրաշք:

Հավատը մի հատուկ միջոց է, որն արձակում է Աստծո զորությունը քո կյանքում: Հավատն ավելին է, քան պարզապես մտքով համաձայնելը: Մի կին, որն արյունահոսության խնդիր ուներ, 12 տարի շարունակ փորձում էր օգնություն գտնել բժիշկներից: Վերջապես նա եկավ Հիսուսի մոտ, կպավ Նրա հագուստին և անմիջապես բուժվեց: Հիսուսը կանգնեց և հարցրեց, թե ո՛վ էր Իրեն դիպել:

Ղուկաս 8.46-48.

«Եվ Հիսուսն ասաց. «Մեկը դիպավ Ինձ, զգացի, որ Ինձնից զորություն դուրս եկավ»: Եվ երբ կինը տեսավ, որ ծածուկ չմնաց, դողալով եկավ՝ Նրա առջև ընկնելով, ամբողջ ժողովրդի առջև պատմեց, թե ինչու դիպավ Նրան և թե ինչպես անմիջապես բժշկվեց: Եվ Նա ասաց նրան. «Քաջալերվի՛ր, դո՛ւստր, քո հավատը քեզ բժշկեց, գնա՛ խաղաղությամբ»:

Հիսուսն ասաց, որ նրա հավատը բուժեց նրան: Հիսուսի ասածից պարզ է դառնում, որ Հիսուսից ուժ էր դուրս եկել, որն էլ իրականացրել էր բժշկությունը: Այդ կինը եկավ Աստծո Որդու մոտ, Ով ամբողջ ճշմարիտ հոգևոր զորության և հավատի աղբյուրն է: Տվյալ դեպքում հավատի արդյունքը եղավ գործողությունը. նա ակնթարթորեն բուժվեց:

Հավատը, որը գալիս է Աստծուց, առանձնահատուկ հավատ է: Աստծուց եկած այս ուժը մեզ օգնում է մեր կյանքի շատ ասպարեզներում: Այս հավատը մեզ օգնում է պայքար մղել հոգևոր մարտերում: Այն ընդամենը մտային ուժ չէ: Այն հոգևոր ուժ է: Գուցե մենք շատ ենք հասարկացնում, երբ ասում ենք, որ հավատն այն ամենն է, ինչի կարիքը դու ունես հոգևոր ուժ ունենալու համար: Հավատից բացի ուրիշ բաներ էլ կան հոգևոր ուժ ունեցող մարդու կյանքում:

Զ. Հոգևոր զորություն ունենալու այս չորս բանալիների միջև եղած կապը:

Աստված ուզում է, որ դու քո կյանքում ամեն օր հոգևոր ուժ ունենաս: Այնպիսի ուժ, որը քեզ կօգնի հաղթական լինել մեղքի փորձություններին դիմագրավելիս: Սակայն դրանից էլ ավելի՝ Նա ուզում է, որ դու հոգևոր ուժ ունենաս, որպեսզի կարողանաս ապրել առատ և լիուլի կյանքով, որը Նա է ստեղծել քեզ համար:

Հիմա, երբ արդեն դիտարկել ենք այս չորս բանալիներից յուրաքանչյուրը՝ հավատալիք, վստահություն, հույս և հավատ, մենք պետք է տեսնենք, թե ինչքանով են դրանք իրար հետ փոխկապակցված, և ինչ դեր է կատարում դրանցից յուրաքանչյուրը քո կյանքում հոգևոր ուժ զարգացնելու հարցում: Մենք կարիք ունենք տեսնելու, թե ինչպես է Աստված ուզում, որ դրանք մաս կազմեն քո առօրյա կյանքում:



Այս չորս ասպարեզների մասին մտածելիս կարող ենք դրանք պատկերացնել որպես համընկնող շրջաններ: Դրանցից ամեն մեկն ունի իր ասպարեզը, որն առանձնահատուկ է և տարբերվում է մյուսներից: Բայց և այնպես, դրանցից յուրաքանչյուրը նաև որոշակիորեն համընկնում է մյուսների հետ: Սակայն դասարանում մեր անցկացրած քննարկման համար մենք կփորձենք յուրաքանչյուր բառը գործածել ըստ իր առանձնակի սահմանման:
Մեր քննարկումը հեշտացնելու համար մենք կհամարենք, որ այս չորս շրջանակները չեն համընկնում, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնակի սահմանումը:



Հավատալիքի բացակայությունը քո կյանքում կբերի վախ և կասկած:

Վստահության բացակայությունը կասկածն է:

Հույսի բացակայությունը հուսահատությունն է, անհանգստությունը, սրտնեղությունն ու դեպրեսիան:

Հավատի բացակայությունն անզորությունն է:

Հոգևորն զորություն ունենալու համար դու պետք է ակտիվ կերպով գործես՝ զարգացնելու համար այս չորս ասպարեզները քո կյանքում:

Հավատալիքի ներկայությունը քեզ կարողություն է տալիս յուրաքանչյուր օրն ապրել վստահությամբ, որ Աստծո Խոսքը ճշմարտություն է: Նրա խոստումները քեզ համար են:

Վստահության ներկայությունը քեզ կարողություն է տալիս վստահ լինել, որ Աստված քեզ ամեն օր կօգնի, և դու կարող ես ապավինել Նրան:

Հույսի ներկայությունը քեզ կարողություն է տալիս ուրախությամբ ակնկալել, որ Աստված կանի այն, ինչ խոստացել է:

Հավատի ներկայությունը քո կյանքում նշանակում է, որ Աստծո զորությունը գործում է քո կյանքում, և Նա Իր գործը կանի քո միջոցով՝ տալով քեզ ուժ, որպեսզի անես այն, ինչ Ինքն է ուզում, որ անես:

Աստծո օգնությամբ կարող ես տեսնել, թե ինչպես են այս չորս որակներն աճում քո կյանքում:

Է. Որտե՞ղ կարող ենք օգտագործել հոգևոր զորությունը մեր կյանքում:

Հոգևոր զորությունն իր մեջ ներառում է այդ չորս տարրերը և ավելին: Այժմ տեսնենք, թե որտեղ կարող ենք կիրառել հոգևոր զորությունը մեր կյանքում: Ահա մի քանի օրինակներ, թե ինչպես կարող ենք գործածել հավատը մեր կյանքում:

1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա (փրկություն): Եփեսացիներին 2.8-9
2. Շարունակել լինել ճշմարիտ քրիստոնյա: Բ Պետրոս 1.3
3. Անել Աստծո կամքը: Սաղմոս 32.8
4. Մեղքը հաղթահարելու ուժ ունենալ: Ա Հովհաննես 5.4-6
5. Անցնել դժվարություններով ու փորձություններով: Հակոբոս 1.2-5
6. Բժշկություն: Հակոբոս 5.15

7. Հաղթահարել փորձությունները: Ա Կորնթացիներին 10.13

8. Հնազանդվել Աստծո օրենքներին: Սաղմոս 119.11

9. Ներկա կարիքների համար: Դու կարող ես հավատ կուտակել նաև ապագա կարիքների համար: Փիլիպպեցիներին 4.6-7

Հոգևոր ուժի զարգացումը մեր կյանքում տեղի կունենա միայն այն դեպքում, երբ մենք անձնական ճիշտ փոխհարաբերություն ունենանք Հիսուսի հետ: Նա մեզ կօգնի աճել հոգևոր զորության մեջ, երբ սիրենք Նրան, և մեր հնազանդությունն ամեն օր աճի: Հոգևոր զորությունը մի բան չէ, որը մենք կարող ենք միայնակ զարգացնել: Պետրոսը պարապելու արդյունքում չէր սովորել ջրի վրայով քայլել՝ դա ամեն անգամ մի փոքր ավելի լավ անելով: Դա միայն Աստծո ճշմարիտ զորությունն էր, որն այդ գիշեր գործեց նրա կյանքում:

Վերը նշված ցանկին նայելիս, որում նշված է, թե որտեղ կարող ես գործածել հոգևոր զորությունը, կտեսնես, որ դրանցից մի մասն առօրյա կյանքի սովորական հարցեր ու մարտահրավերներ են: Իսկ մի մասն էլ հրաշքներ են: Աստված ուզում է Իր զորությունը քեզ տալ, որպեսզի դու հաղթահարես այն բոլոր մարտահրավերները, որոնք Ինքը թույլ է տալիս քո կյանքում. լինի դա մեկ անգամվա դեպք, թե ամենօրյա:

Երբ դու մեկ այլ հայացք գցես հոգևոր զորության բոլոր չորս տարրերին՝ հավատալիք, վստահություն, հույս և հավատ, կտեսնես, որ դրանցից ամեն մեկն իր յուրահատուկ դերն ունի: Սակայն հավատը բավականաչափ տարբերվում է մյուսներից: Հավատալիքը, վստահությունը և հույսը ավելի շատ ներգրավվածություն են ենթադրում քո կողմից: Այս երեքը նման են դռների, որոնք դու բացում ես հավատի՝ Աստծո զորության համար, որպեսզի այն հոսի քո միջոցով: Հավատը այն չէ, որը դու ինքդ ես անում, այլ այն է, որ դու ինքդ քեզ բացում ես Աստծո զորության համար, որպեսզի այն հոսի քո միջոցով:

Դու ես որոշում՝ հավատալ, վստահել կամ հուսալ: Եվ շատ անգամ դժվար է սա անել կյանքում: Դու Աստծո օգնության կարիքն ունես այդ երեք բաներն անելու համար: Սա ճիշտ է նաև այն մարդու դեպքում, որը եկավ Հիսուսի մոտ՝ հուսահատորեն հրաշք խնդրելով Նրանից:

Մարկոս 9.21-24.

«Եվ Նա հարցրեց հորը. «Ինչքա՞ն ժամանակ է, որ այս բանը պատահել է նրան»: Նա էլ ասաց. «Մանկությունից: Եվ շատ անգամներ էլ կրակի ու ջրի մեջ է գցել, որ կործանի նրան: Բայց եթե Դու մի բան կարող ես անել, գթա՛ մեզ և օգնի՛ր»: Հիսուսը նրան ասաց. «Եթե կարող ես հավատալ. ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է»: Եվ անմիջապես տղայի հայրն աղաղակեց ու արտասվելով ասաց. «Տե՛ր, հավատո՛ւմ եմ, օգնի՛ր իմ անհավատությանը»:

Իսկ դո՞ւ: Դու քեզ զգո՞ւմ ես այս հոր նման: Դո՞ւ էլ ես հուսահատորեն Աստծուց հրաշք խնդրում քո կյանքում, սակայն տեսնում ես, որ պայքարների մեջ ես:

Նորադարձ հավատացյալների համար կա մի վտանգ, այն, որ նրանք այնքան են փորձում կատարյալ ձևակերպում տալ հոգևոր զորությանը, որ բաց են թողնում դրա ողջ նպատակը: Եթե դեռևս հարցեր ունես կապված հավատալիքի, հույսի, վստահության և հոգևոր ճշմարիտ ուժի հետ, մի՛ թույլ տուր, որ դա խորտակի քեզ և հասցնի հուսահատության աստիճանի: Թող գիտնականներն ու աստվածաբաններն անհանգստանան տեսությունների վերաբերյալ մանրամասնությունների հարցում: Քո կյանքի այս կետում ամենակարևորն այն է, որ սկսես հոգևորապես աճել և գործածել Աստծո զորությունը քո կյանքում, որպեսզի պայքարես այն մարտերում, որոնք անպայման քեզ կհանդիպեն:

Երբ քո ընտանիքում նոր երեխա է ծնվում, դու հենց առաջին շաբաթում չես սկսում զբաղվել այն բանով, որ նա իմանա իր անունը, հասցեն, և թե ինչպես մկանները զարգացնի ծանրություններ բարձրացնելով: Դու նրան հատուկ սնունդ ես տալիս, որպեսզի օգնես նրան աճել, և որպեսզի վստահ լինես, որ նա վտանգներից պաշտպանված է: Շատ հարցերում հավատացյալի վերստին ծնունդը նման է այս օրինակին: Դու կարող ես հոգևորապես «հիվանդանալ», եթե քո ողջ ժամանակն անցկացնես՝ փորձելով պատասխանել քո հոգևոր կյանքի աստվածաբանական մանրամասնություններին, միևնույն ժամանակ՝ չկարողանալով քո առօրյա կյանքում կիրառել այն, ինչ դու արդեն գիտես:

Այս դասընթացի հիմնական նպատակը քեզ օգնելն է, որպեսզի իմանաս, թե որտեղից է քո հոգևոր ուժը գալիս, և օգտագործես այդ ուժը քո կյանքում: Ինչքան շատ գործածես այդ ուսուցումները քո կյանքում, այնքան հեշտ դրանք կհասկանաս: Հաջորդ գլխում մենք ավելի մանրամասն կդիտարկենք, թե ինչպես կարող ես դու հոգևոր ուժ զարգացնել քո կյանքում:

Գլուխ 3.
Ինչպե՞ս ունենալ հոգևոր զորություն:

Ոչ ոք չի ուզում թույլ լինել: Աստված պատրաստ է քեզ օգնել՝ քո կյանքում այսօր հոգևոր ուժ զարգացնելու հարցում: Դա գործընթաց է: Ինչպես մկաններն են մարզվելու ընթացքում դանդաղ զարգանում, այնպես էլ՝ հոգևոր ուժի այն 4 բանալիները՝ հավատալիք, վստահություն, հույս և հավատ:

Հավատալիքի, վստահության և հույսի զարգացման մեջ դու մեծ բաժին ունես: Իրականում պարտադիր չէ, որ մարդը հավատացյալ լինի, որպեսզի կարողանա զարգացնել այս հատկությունները: Բայց և այնպես, Աստված պատրաստ է քեզ օգնել՝ զարգացնելու համար հավատալիք, վստահություն և հույս:

Հավատը տարբեր այս մյուս երեքից: Հավատը հնարավոր չէ զարգացնել սեփական ուժով: Հավատի համար պահանջվում է Աստծո անմիջական ներգրավվածությունը ոչ միայն սկզբում, այլև՝ միշտ: Այս գլխում մենք կհետազոտենք այն քայլերը, որոնք դու կարող ես կատարել՝ քո կյանքում հոգևոր ճշմարիտ ուժ զարգացնելու համար:

Ա. Մի՛ աշխատիր հրաշքների մեջ մասնագիտացած հոգևոր գերաստղ լինել:

Հաճախ նորադարձ հավատացյալները երազում են այն մեծ ոգևորության մասին, որ իրենք կունենան, եթե կարողանային հրամայել հիվանդությանը՝ հեռանալ, և տեսնեին, թե ինչպես են հիվանդներն ակնթարթորեն բժշկվում: Նրանք շատ կուզենային, որ Աստված իրենց միջոցով հրաշքներ աներ, ինչպես Հիսուսի կյանքում էր:

Մի կարևոր դաս, որ մենք բոլորս պետք է սովորենք, այն է, որ մենք չենք կարող Աստծուն ասել, թե երբ հրաշքներ կատարի: Մենք Աստծո ղեկավարը չենք: Նա՛ պետք է լինի մեր կյանքի Առաջնորդը: Աստված մեզ ստեղծել է Իր ուրախության համար: Որոշ մարդիկ մտածում են, որ Աստված նման է մատուցողի, ում կարելի է սրտի ուզած պատվերը տալ:

Հին Կտակարանի Դանիելի գիրքը մեզ համար լավ օրինակ է, թե ինչպիսին պետք է լինի մեր ակնկալիքը գերբնական երևույթների հանդեպ: Սեդրաքը, Միսաքն ու Աբեդնագովը կանգնած էին անմիջական մահվան վտանգի առաջ: Նրանց ցանկանում էին գցել կրակի հնոցի մեջ՝ կուռքերին չպաշտելու համար: Թագավորը նրանց հնարավորություն տվեց՝ փոխել իրենց միտքը և երկրպագել կուռքերին: Նրանց պատասխանը ցույց տվեց Աստծո փրկարար զորության հանդեպ նրանց վստահությունը: Սակայն նրանք ճնշում չէին գործադրում Աստծո վրա, ինչ է որ՝ անպայման իրենց ազատի այդ վառվող հնոցից:

Դանիել 3.16-18.

«Սեդրաքը, Միսաքն ու Աբեդնագովը պատասխանեցին ու ասացին թագավորին. «Հարկ չկա այդ բանի համար քեզ պատասխան տալու, ո՛վ Նաբուգոդոնոսոր: Ահա մեր Աստվածը, ում մենք ծառայում ենք, մեզ կարող է փրկել բորբոքված կրակե հնոցից. և քո ձեռքից էլ, ո՛վ թագավոր, Նա մեզ կազատի: Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, ո՛վ արքա, որ քո աստվածներին մենք չենք ծառայի և քո կանգնեցրած արձանը չենք պաշտի»:

Եթե դու արդեն կարդացել ես այս պատմությունը Դանիել մարգարեության գրքից, ապա գիտես, որ Աստված իրականում ազատեց այդ երեք խիզախ երիտասարդներին: Պատմության մնացած մասը կարդալով՝ դու կտեսնես, որ այդ գերբնական դեպքն իրականում փառք բերեց Աստծուն:

Երբ դու Աստծուն խնդրում ես, որ գերբնական ինչ-որ բան անի, պետք է վստահ լինես, որ քո դրդապատճառն Աստծուն փառք բերելն է: Եվ նույնիսկ այդ դեպքում էլ դու մտքում պետք է վստահ լինես, որ Աստված է վերջնական որոշում կայացնողը՝ թե արդյո՞ք գործի այդ հրաշքը, որի համար դու խնդրում ես Նրան:

Մի օր Հիսուսն Իր աշակերտների հետ գնում էր Երուսաղեմ: Նա մի քանի հոգու ուղարկեց սամարացիների մի գյուղ, որպեսզի Իր համար տեղ պատրաստեն: Այս պատմությունը ցույց է տալիս, թե որքան ուշադիր է Աստված, թե ե՛րբ և ինչո՛ւ է Նա հրաշքներ կատարում:

Ղուկաս 9.53-56.

«Բայց նրանք չընդունեցին Նրան, որովհետև Նրա դեմքն ուղղված էր դեպի Երուսաղեմ: Եվ երբ Նրա աշակերտները՝ Հակոբոսն ու Հովհաննեսն այս տեսան, ասացին. «Տե՛ր, կուզե՞ս ասենք, որ երկնքից կրակ իջնի և նրանց բնաջնջի, ինչպես Եղիան արեց»: Նա էլ դարձավ, սաստեց նրանց ու ասաց. «Չգիտեք, թե ինչ հոգուց եք դուք, որովհետև Մարդու Որդին չեկավ մարդկանց կյանքը կործանելու, այլ փրկելու նրանց»: Եվ նրանք գնացին ուրիշ գյուղ»:

Նորադարձ հավատացյալի համար չպետք է նպատակ լինի՝ սովորել գաղտնիքները, թե ինչպես ամեն օր մեծ հրաշքներ անել: Մեր հիմնական նպատակը պետք է լինի բացահայտելը, թե ինչ է Աստված ուզում, որ այսօր անենք, և անենք դա հետագայում: Հիսուսը շատ անգամ ասաց, որ Իր կյանքի հիմնական նպատակն Աստծո կամքը կատարելն է:

Դու կարող ես վստահ լինել, որ Աստված ուզում է մեզնից յուրաքանչյուրին տեսնել հոգևորապես ուժեղ և հասուն: Նրա զորությունը մեզ համար հասանելի է՝ մեր առօրյա կյանքում գործածելու համար: Մի՛ զարմացիր, եթե Նա խնդիրներ թույլ տա քո կյանքում. նպատակն է՝ որ ստուգի քո համբերությունը և Քրիստոսի հանդեպ քո նվիրվածությունը:

Բ. Ժամանակ և աշխատանք է պահանջվում հոգևոր զորություն զարգացնելու համար:

Քանի անգամ ես դու երազել, որ լավագույնը լինես որևէ սպորտաձևի կամ այլ գործունեության մեջ: Գուցե դու երազել ես թենիսի չեմպիոն դառնալ, կամ բասկետբոլի ճանաչված խաղացող, կամ ֆուտբոլային թիմի հարձակվող: Զմռանը, երբ նայում ես չմշկավազքի մրցույթները, գուցե երազում ես, որ ինքդ էլ մասնակցեիր և առաջին տեղը շահեիր:

Հոգևորապես ուժեղ դառնալու ճանապարհը նման է չմշկավազքում, բասկետբոլում, ֆուտբոլում կամ թենիսում չեմպիոն դառնալու մեթոդներին: Դու միանգամից չես կարող սպորտային չեմպիոն դառնալ: Տքնաջան աշխատանքի հարյուրավոր, գուցե հազարավոր ժամեր է պահանջվում, որպեսզի լավագույնը դառնաս քո ընտրած սպորտաձևում: Երբ դու նայում ես քո սիրելի չեմպիոնին, թվում է՝ այնքան հեշտ է: Սակայն դու հեռուստացույցով չես տեսնում անընդմեջ ու տևական պարապմունքների ու մարզումների հոգնեցուցիչ ժամերը: Օլիմպիական խաղերին մասնակցողներից շատերը տարիներ շարունակ ամեն օր պարապել են՝ օրը 8-10 ժամ:

Եթե դու հոգևոր զորություն զարգացնելու համար որոշակի ժամանակ ներդնես, ինչպես սպորտային աստղերն են անում իրենց պարապմունքների համար, կարող ես վստահ լինել, որ շուտով թե՛ դու, թե՛ մյուսները փոփոխություն կտեսնեք ձեր կյանքում: Մի՛ ակնկալիր, որ երկու-երեք շաբաթում «հոգևոր հսկա» կդառնաս: Բիլի Գրեհեմը, կամ Ջոյս Մեյերը երեք ամիս աշխատելուց հետո աշխարհահռչակ քարոզիչներ չդարձան:

Աստված պատրաստ է գործել քո կյանքում այսօր: Նա կվերցնի քեզ այնտեղ, որտեղ հիմա գտնվում ես, և կսկսի «պարապմունքներով» անցկացնել: Աստված հաջողության հասնելու համար կարճ ճանապարհներ չունի:

Բայց և այնպես, մի՛ ակնկալիր, որ Աստված քեզ հետ կվարվի այնպես, ինչպես մյուսների հետ: Աստված չի ուզում, որ դու դառնաս Բիլի Գրեհեմ կամ Ջոյս Մեյեր: Այնպես որ, հավանական է, դու չես ունենա նույն ծանրաբեռնվածությունը, ինչ Բիլի Գրեհեմը կամ Ջոյս Մեյերն են ունեցել:

Հոգևոր զորության որոշ աստիճաններ գալիս են հոգևոր հասունության հետ: Մի՛ ակնկալիր, որ հենց հաջորդ շաբաթ ցնցող հրաշքներ կատարող կենտրոնական դեմք կդառնաս: Հոգևոր աճի բանալին աչքերդ Հիսուսի վրա հառելն է այսո՛ր: Հնազանդվի՛ր Նրան այսո՛ր, և Նա քեզ կտա հարկ եղած հոգևոր ուժն այսո՛ր: Ինքդ քեզ հարցրո՛ւ. «Իմ կյանքի ո՞ր ասպարեզներում է Աստված ուզում գործածել Իր զորությունն այսօր»:

Համեմատենք հոգևոր զորությունը քո մարմնի մկանների հետ: Քո մկանների չափն ու ուժը որոշում են, թե որքան ուժեղ ես դու: Դու կարող ես ասել. «Ես կարող եմ 70 կգ իմ գլխից վեր բարձրացնել»: Սակայն այդ խոսքերը դեռ չեն ապացուցում, թե որքան ուժեղ ես դու: Երբ դու վերցնում ես 70 կգ-ն ու այն բարձրացնում քո գլխից վեր, բոլորը տեսնում են, որ դու իրոք կարողանում ես այդքան ծանրություն բարձրացնել: Դու այդքան ուժեղ չես դառնում ընդամենը քնելուց առաջ ամեն օր ինքդ քեզ ասելով. «Ես գիտեմ, որ կարող եմ 70 կգ իմ գլխից վեր բարձրացնել»: Այն շատ պարապմունք է պահանջում:

Նմանապես՝ դու չես կարող հոգևոր զորություն զարգացնել ընդամենն ինքդ քեզ ասելով. «Ես հոգևորապես ուժեղ եմ: Ես կարող եմ դիմադրել փորձություններին, որոնք հանդիպում են ինձ այսօր»: Միայն խոսքերը չեն կարող քեզ հոգևորապես աճեցնել: Դու պետք է հանդիպես դժվարությունների ու մարտահրավերների քո կյանքում: Դու պետք է աճես Աստծո օգնությամբ, և Նա կօգնի քեզ հոգևորապես ուժեղանալու գործում: Լսել Աստծուն, խոսել Աստծո հետ, հնազանդվել Նրա ուսուցումներին. այս բոլորն օգնում են քեզ հոգևորապես աճել:

Գ. Հոգևոր զորություն զարգացնելու հիմնական քայլերը:

Մենք հոգևոր զորությանը տանող ճանապարհը չպետք է չափազանց հասարակ ներկայացնենք: Հոգևոր զորության որոշ աստիճաններ գալիս են ժամանակի և դժվարին աճի հետ միասին միայն: Չկան հոգևոր հսկա դառնալու 10 հեշտ քայլեր: Բայց և այնպես, հոգևոր զորությունը պահված չէ միայն այսօրվա հարուստ և մեծ քարոզիչների համար: Աստված ուզում է Իր զորությունը տալ ցանկացած ճշմարիտ հավատացյալի՝ անկախ նրա երիտասարդ կամ տարիքով լինելուց:

1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա:

Հոգևոր զորությունը միայն Աստծո պատասխանատվությունը չէ, ոչ էլ այն կարող ես վաստակել բարի գործերով: Հոգևոր զորության տանող առաջին քայլը ճշմարիտ քրիստոնյա դառնալու որոշում կայացնելն է: Եթե դու դեռ որոշում չես կայացրել՝ դառնալ ճշմարիտ քրիստոնյա, չես խոստովանել քո մեղքերն ու ներում խնդրել, ապա չես կարող ակնկալել, որ Աստված քեզ հոգևոր զորություն կտա:

2. Մոտեցի՛ր Աստծուն:

Քո կյանքում հոգևոր ճշմարիտ զորություն ունենալու ամենակարևոր քայլերից մեկն Աստծուն ավելի մոտենալն է: Երբ Հիսուսը երկրի վրա էր ապրում, շատ մարդիկ Նրան դիմում էին օգնության համար: Նրանք մոտենում էին ճիշտ աղբյուրին՝ Աստծո Որդուն: Հիսուսը միանշանակ ճշմարիտ օրինակ է այն անձնավորության, ով Իր կյանքում ուներ այդ հոգևոր զորությունը: Հայր Աստծո հետ փոխհարաբերություններն Իր համար ավելի կարևոր էին, քան որևէ բան այս աշխարհում: Եթե դու ուզում ես, որ Աստծո հոգևոր զորությունը գործի քո կյանքում, ապա քո ամենակարևոր քայլը պետք է լինի Աստծուն ավելի ու ավելի լավ ճանաչելը:

3. Հնազանդություն:

Դու քո կողմից անելու կարևոր պատասխանատվություն ունես քո կյանքում հոգևոր ուժ զարգացնելու գործում: Մենք արդեն նշել ենք ամենակարևոր երկու քայլերը.

1) դառնալ ճշմարիտ քրիստոնյա, և

2) ավելի մոտենալ Աստծուն:

Հնազանդությունը մեկ այլ կարևոր քայլ է քո հոգևոր աճի մեջ: Աստծո օրենքները հստակ են, հատկապես՝ Աստվածաշնչի երկու մեծագույն օրենքները: Սիրել Աստծուն և սիրել դրացուն՝ ինչպես ինքդ քեզ:

Եթե դու աշխատես հասկանալ Աստծո օրենքներն ու դրանք կիրառել քո ամենօրյա կյանքում, կտեսնես, որ դրանք քեզ նոր խորաթափանցություն կտան այն առումով, թե ինչպես ավելի մոտենաս Աստծուն: Դու պետք է ուշադիր լինես, որ հնազանդվես Աստծուն, հատկապես, երբ փորձություններ են գալիս քո կյանք: Աստծո զորությունը քեզ համար հասանելի կլինի, երբ կենտրոնանաս Նրան հնազանդվելու վրա, նպատակը՝ որպեսզի կարողանաս դիմակայել այդ փորձություններին:

4. Նախապատրաստվի՛ր Աստծո հոգևոր զորությունը ստանալու համար:

Եթե դու ուզում ես հոգևոր ուժ ստանալ, պետք է պատրաստվես դրա համար: Ձևերից մեկն Աստվածաշունչն ուսումնասիրելն է: Դու պետք է հասկանաս և հավատաս այն ամենին, ինչ Աստվածաշունչն ասում է Աստծո հավատի և հոգևոր զորության մասին: Այն, ինչ ճիշտ է հոգևոր ուժ ստանալու վերաբերյալ ընդհանրապես, կիրառելի է նաև Աստծո հավատի համար կոնկրետ ասպարեզներում:

Շատ մարդիկ Աստծուց հավատ չեն ստանում, որովհետև չգիտեն, թե ինչ է հավատը, չգիտեն, թե ինչպես ստանալ կամ ինչպես օգտագործել այն: Նրանք կարծում են՝ հավատը նույնն է, ինչ՝ հավատալիքը: Նրանց թվում է, որ եթե ասեն, որ իրենք հավատ ունեն, հավատը կգա: Սակայն Աստվածաշունչն այդպես չի սովորեցնում: Դու պետք է բացահայտես, թե ինչ է Աստվածաշունչը սովորեցնում հավատի մասին, և թե ինչպես ստանալ և օգտագործել այն:

Դու կարող ես տեսնել, որ Աստված քո ընկերներից մեկին հատուկ ձևով է օգտագործում: «Հրաշալի է,- մտածում ես դու,- ես էլ եմ ուզում մեծ ավետարանիչ լինել»: Բայց արդյո՞ք դա հենց այն է, ինչ Աստված ուզում է, որ դու անես: Աստված քեզ համար ծրագիր ունի, Նա քեզ համար գործ ունի, որոնք ուզում է, որ դու անես (տե՛ս Եփեսացիներին 2.10): Աստծո զորության մեջ աճելու համար շատ կարևոր քայլ է Աստծուն շարունակաբար լսելը, թե ինչ է Աստված ուզում, որ դու անես յուրաքանչյուր օր: Պարզապես մի՛ նստիր ու սպասիր երկնային հատուկ նշանի, որպեսզի այդ օրն ինչ-որ բան անես: Քո ամենօրյա պարտականությունները կատարելիս ժամանա՛կ հատկացրու Աստծո հետ խոսելու համար և հարցրո՛ւ, թե ինչպես կարող ես ավելի լավ անել այն, ինչը դու այդ պահին անում ես:

Ուսումնասիրի՛ր Աստվածաշնչի մեծ մարդկանց կյանքը՝ տեսնելու համար, թե ինչ արեցին նրանք հոգևոր զորություն ստանալու նպատակով: Հիսուսը, Աբրահամը, Մովսեսը, Եղիան, Դավիթը, Եսթերը, Մարիամը, Հիսուսի աշակերտները և Պողոսն ընդամենն այն մի քանի անձնավորություններն են, որոնցից մենք կարող ենք սովորել:

5. Աղոթք:

Դու պետք է աղոթես և Աստծուն խնդրես, որ քեզ հոգևոր ուժ տա: Որոշ հավատացյալների համար դժվար է բառեր գտնել, երբ աղոթում են Աստծուն: Եթե դու այդ խնդիրն ունես, նախքան աղոթելը ցուցա՛կ կազմիր այսօր քեզ հանդիպած խնդիրների և փորձությունների վերաբերյալ: Նաև գրի՛ առ լավ բաները, որոնք տեղի են ունեցել այսօր: Այնուհետև գրի՛ր այն խնդիրներն ու դժվարին իրադրությունները, որոնք, կարծում ես, կարող են քեզ հանդիպել այսօր կամ վաղը:

Քո աղոթքն սկսի՛ր՝ Աստծուն շնորհակալություն հայտնելով Իր օգնության համար, որ այդ լավ բաները տեղի են ունեցել այսօր: «Մի րոպե՛,- գուցե ասես դու, - ի՞նչ իմանամ, որ Աստված է հեղինակն այն բոլոր լավ բաների, որոնք ինձ հետ պատահել են այսօր»: Դու կարող ես դրանք գրել որպես պատահականություններ, կամ էլ Աստծուն շնորհակալություն հայտնել Իր կողմի համար, որ այդ լավ բաները այսօր բերել է քո կյանք:

Հաջորդը. ժամանա՛կ հատկացրու, որ աղոթես խնդիրների քո ցուցակի համար: Խնդրի՛ր Աստծուն, որպեսզի օգնի քեզ հասկանալ, թե ինչպես կարող ես այդ խնդիրներից յուրաքանչյուրին արձագանքել Իրեն հաճելի ձևով: Փորձի՛ր հիշել աստվածաշնչյան խոսքեր, որոնք համապատասխանում են տվյալ իրավիճակին: Խնդրի՛ր Աստծուն, որ քեզ հոգևոր ուժ տա՝ դիմակայելու համար այդ մեղքի փորձություններին: Մի՛ խնդրիր Աստծուց հոգևոր ուժ, որ պայքարես այն խնդիրների դեմ, որոնք գուցե քո կյանքում կլինեն տասը տարի հետո: Քո ուշադրությունը կենտրոնացրո՛ւ ներկայի և մոտ ապագայի վրա:

6. Սովորի՛ր քո փորձություններից ու խնդիրներից:

Հոգևոր զորություն զարգացնելու քո պատասխանատվությունը չի սահմանափակվում աղոթելով: Հակոբոս 1.2-4-ը հստակ ասում է, որ Աստված տարբեր տեսակի փորձություններ ու դժվարություններ թույլ կտա քո կյանքում, որպեսզի ստուգի քեզ և հնարավորություն տա համբերություն և աստվածային այլ հատկություններ զարգացնելու գործում: Դու պետք է գործի դնես այն, ինչ Աստված արդեն սովորեցրել է քեզ Աստվածաշնչի և մյուս հավատացյալների միջոցով: Ամեն օր դու որոշումներ կայացնելու հնարավորություն կունենաս:

Հակոբոս 1.2-4.

«Եղբայրնե՛րս, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք, իմանալով, որ ձեր հավատի փորձությունը համբերություն է առաջ բերում: Սակայն համբերությունը թող կատարյալ արդյունք ունենա, որպեսզի կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք»:

Հոգևոր կյանքում հասունանալով՝ դու պետք է պարզ գիտակցություն ձեռք բերես, թե որ իրավիճակներում իրոք կարիք կա հոգևոր զորություն ունենալու: Դու Աստծո խամաճիկը չես: Նա քեզ նայում է որպես Իր զավակի: Նա ակնկալում է, որ դու զարգանաս և հասուն քրիստոնյա դառնաս, ով ի վիճակի է պատասխանատվություններ ստանձնել: Այս հասունացման գործընթացի որոշ մասը պետք է ներառի զանազանելու հատկության զարգացումը: Մենք կարիք ունենք զանազանելու Աստծո ուժը սատանայի ուժից:

7. Ծոմապահություն:

Ծոմապահությունն իր մեջ ներառում է որոշակի ժամանակ սնունդ չընդունելն ու աղոթքի հատուկ ժամեր ունենալը: Եթե դու ընդամենը սնունդ չընդունես, դա կլինի սովաբուժություն: Ծոմապահությունը պարտադիր ներառում է աղոթքը: Դու այդ ընթացքում հրաժարվում ես ֆիզիկական ախորժակից, որպեսզի ավելի մտերիմ փոխհարաբերություն զարգացնես Աստծո հետ:

Աղոթքի և ծոմապահության այս ժամանակահատվածները կարող են մեծ հնարավորություն լինել ինքնադաստիարակության համար: Դու դրանով կարծես ասում ես. «Աստծո հետ իմ փոխհարաբերությունն ինձ համար ավելի կարևոր է, քան այսօր սնունդ ընդունելը»:

Դու կարող ես ծոմ պահել կարճ ժամանակով՝ մի օրով կամ ավելի երկար: Ծոմապահությունն Աստծուն մեր կամքը հարկադրելը չէ, այլ՝ որ Նրա կամքը լսենք և մեր կյանքը դասավորենք դրա համեմատ:

Քո ծոմապահությունը կարող է լինել սննդի փոխարեն հրաժարում նաև այլ բաներից, օրինակ՝ հեռուստացույց դիտելուց կամ տեսախաղեր խաղալուց: Դու կարող ես ծոմ պահել՝ որոշելով որոշակի ժամանակ գումար չծախսել սուրճի, պաղպաղակի կամ ուրիշ բանի վրա, իսկ հետո այդ գումարը նվիրաբերել միսիոներությանը կամ Աստծո այլ ծառայություններին:

8. Փառաբանություն և երկրպագություն:

Փառաբանությունն ու երկրպագությունը կարող են հրաշալի միջոց լինել Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություն զարգացնելու համար: Սաղմոս 100.4-ն ասում է. «Մտե՛ք Նրա դռներից գոհությամբ, ու Նրա սրահները՝ փառաբանությամբ»:

Փառաբանությունը քեզ օգնում է՝ քո ուշադրությունը կենտրոնացնել Աստծո և Նրա ճշմարտության վրա: Պողոսն ու Շիղան փակված էին բանտում: Կեսգիշերին նրանք սկսեցին երգել: Աստված երկրաշարժ առաջացրեց և ազատեց նրանց (տե՛ս Գործք 16.22-28): Նրանց երկրպագությունը կախարդական փայտիկ չէր, որ հրաշք առաջացրեց: Աստված Ի՛նքը որոշեց այդ ուշ գիշերով հրաշք կատարել:

Սակայն ինչպիսի՞ն կլիներ Աստծո արձագանքը, եթե Պողոսն ու Շիղան բարկանային ու ողջ գիշեր Աստծուն բողոքեին բանտարկված լինելու համար: Մենք չենք կարող հրաշքներ վաստակել մեր լավ վարքով, սակայն փառաբանությունն ու երկրպագությունը միջոցներ են, որոնք մեզ օգնում են՝ Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություն զարգացնելու հարցում: Դա մեզ օգնում է՝ կենտրոնանալ Նրա վրա, երբ պայքարներ ենք ունենում:

Հին Կտակարանում Հովսափատ թագավորը մեծ պատերազմ ունեցավ: Նա աղոթեց և Աստծո օգնությունը խնդրեց: Ճակատամարտի օրը նա մարդկանց նշանակեց, որպեսզի Աստծուն փառաբանելով զորքն առաջնորդեին պատերազմի: Նրանք այդ օրը հզոր հաղթանակ ունեցան: Դա ընդամենը նրանց մարդկային ուժը չէր, այլ Աստծո զորությունն էր, որ նրանց հաղթություն պարգևեց այդ օրը (տե՛ս Բ Մնացորդաց 20-ը, հատկապես՝ 20-23 համարները):

Դ. Իսկ որտեղի՞ց ես պետք է սկսեմ:

Իսկ որտե՞ղ ես այսօր դու գտնվում՝ Աստծո ուժը ստանալու և օգտագործելու հարցում: Դու իրոք կարիք ունե՞ս Աստծո զորության: Դու պատրաստակա՞մ ես անելու՝ ինչ էլ որ Նա ուզենա, որ դու անես:

Այս հոգևոր զորությունը այն չէ, որ Աստված քեզ տալիս է ու ասում. «Գնա՛, զվարճացի՛ր: Արա՛ դրա հետ՝ ինչ ուզում ես»: Ճիշտ հակառակը. Աստված քեզ դա կտա, երբ դու ցույց տաս, որ պատրաստ ես և կամենում ես անել այն, ինչ Նա է ուզում, որ անես:

Կարևոր հարցերից մեկն այստեղ հետևյալն է. «Ի՞նչ ես դու ուզում»: Կամ՝ դու ակնկալիք ունե՞ս: Դու ոգեշնչվո՞ւմ ես այն հնարավորություններից, որոնք Աստված կարող է անել քո միջոցով: Կամ գուցե դու թերահավատ ես և մի կողմ կանգնած ասում ես. «Աստվա՛ծ իմ, Դու կարող ես իմ միջոցով գործել՝ նախքան ես կհավատամ, կվստահեմ կամ կհուսամ»:

Մենք հաճախ ոգևորվում ենք զգայացունց հրաշքներով: Իսկ Աստված ուզում է, որ դու սկսես գործածել Իր հոգևոր զորությունը՝ քո առօրյա կյանքում մեղքի փորձությունները հաղթահարելու և աստվածային բնավորություն զարգացնելու համար: Հնազանդությունը հոգևոր զորություն ունենալու հիմնաքարերից մեկն է: Աստված քեզ հոգևոր զորություն չի տա, եթե դու ըմբոստանում ես Նրա դեմ և հրաժարվում ես հնազանդվել Նրան:

Աստված կատարյալ մարդիկ չի փնտրում, որպեսզի նրանց հոգևոր զորություն տա: Աստված պատրաստ է և կամենում է քեզ օգնել, որ աճես: Իսկ դու ուզո՞ւմ ես աճել: Դու ուզո՞ւմ ես, որ Նա լինի քո կյանքի բոլոր ասպարեզների Առաջնորդը: Նա քեզ կվերցնի քո գտնված տեղից և կօգնի քեզ, եթե դու Նրան թույլ տաս:

Գլուխ 4.
Ճշմարիտ հոգևոր զորությունը և արհեստածինները:

Ա. Աստծո ուժը, սատանայի ուժը և մարդկային ուժը:

1. Դու պետք է ընտրես քո կյանքի տիրոջը:

Աստվածաշունչը մի լուր ունի, որը շատ ոչ-քրիստոնյաներ չեն լսել: Կամ եթե նույնիսկ լսել են, արհամարհել են: Աստվածաշունչն ասում է, որ բոլորը ստրուկ են: «Դու գժվե՞լ ես,- ասում են նրանք,- ես ազատ եմ»: Սակայն մեծամասնության կարծիքը չի փոխում Աստծո Խոսքի ճշմարտությունը:

Հռոմեացիներին 6.16-18, 22.

«Դուք չգիտե՞ք, թե ում որ ձեր անձը որպես ծառա հնազանդվելու ներկայացնեք, դառնում եք նրա ծառան, ում հնազանդվում եք. լինի դա մեղքին, որը տանում է մահվան, թե հնազանդությանը, որը տանում է արդարության: Սակայն գոհություն Աստծո, որ թեև մեղքի ծառա էիք, բայց սրտանց հնազանդվեցիք այն վարդապետության օրինակին, որը հանձնվեց ձեզ: Ուրեմն դուք մեղքից ազատված՝ արդարության ծառաներ եղաք: Բայց հիմա մեղքից ազատված՝ Աստծո ծառաներ եղաք, դուք սրբության ձեր պտուղն ունեք, և վերջը՝ հավիտենական կյանք»:

Ընտրությունը շատ հստակ է. դու ազատ ես ծառայելու Աստծուն, կամ սատանային: Չկա երրորդ տարբերակ: Դու չես կարող ասել. «Ես չեմ ուզում՝ ո՛չ Աստված, ո՛չ էլ սատանան իշխի իմ կյանքում: Ես ինքս եմ ուզում լինել իմ ղեկավարը»: Եթե դու որոշես մերժել Աստծուն, դու ինքնաբերաբար կընդունես սատանային՝ որպես քո առաջնորդի: Հին Կտակարանում Հեսուն՝ հրեաների առաջնորդը, իր ժողովրդին նմանատիպ մարտահրավեր արեց: Նա նրանց ասաց. «Ընտրե՛ք, թե ում եք դուք ծառայելու»: Այսինքն՝ որոշե՛ք. ծառայել Աստծուն, կամ մյուս հեթանոսական աստվածներին: Հեսուն ասաց. «Բայց ես և իմ տունը Տիրոջն ենք պաշտելու» (Հեսու 24.15):

Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ հոգևոր ուժերն իրական են: Սատանան և նրա դևերը մարտի մեջ են մտել Աստծո ուժերի դեմ: Եվ մարտադաշտը երկրի վրա ապրող յուրաքանչյուր մարդու կյանքն է: Դու կարող ես որոշել, թե որ կողմում ես լինելու: Բայց չես կարող անտեսել քո կյանքի այս հատվածը:

Մի պահ պատկերացրո՛ւ, որ դու թիանավակ ես գետի վրա, որը միայն մեկ թիակ ունի: Դու փորձում ես ինքնուրույն թիավարել քո նավակը, բայց այն ընդամենը պտտվում է տեղում, քանի որ միայն մեկ թիակ ունես: Մյուս թիակն ափին է: Հիսուսը և սատանան կանգնած են ափին: Միայն դո՛ւ կարող ես որոշել, թե նրանցից որ մեկը գա քեզ հետ: Եթե դու ընտրես, որ սատանան լինի քեզ հետ, նա քեզ հետ կթիավարի, երբ դու գնաս նրա ասած ուղղությամբ՝ գետի հոսանքով դեպի ներքև: Չէ՞ որ ավելի հեշտ է թիավարել գետի հոսանքով ներքև: Սակայն գետի վերջում վտանգավոր ժայռեր կան:

Եթե դու որոշես, որ Աստված լինի քո թիավարող գործընկերը, Նա քեզ կփորձի համոզել, որ գնաս Իր ճանապարհով՝ գետի հոսանքին հակառակ՝ դեպի վեր: Գետով վեր բարձրանալն ավելի դժվար է, սակայն եթե Աստված քո գործընկերն է, դու կարող ես վստահ լինել, որ Նա քեզ տեղ կհասցնի:

Դու պետք է ուղղություն տաս քո նավակին, որպեսզի խուսափես բախվելուց: Եթե թույլ տաս, որ Աստված ուղղորդի քո նավակը, Նա շատ ավելի լավ կանի այդ գործը, որովհետև Նա շատ ավելի փորձառու է, քան դու: Սակայն եթե դու պնդես, որ ինքդ պետք է ուղղորդես, կարող ես վթարի ենթարկվել, նույնիսկ եթե Աստված քո նավակի մեջ է՝ քեզ հետ:

Եթե դու Հիսուսին ընտրես որպես քո Տեր և Առաջնորդ, ապա կարող ես վստահ լինել, որ Աստված քեզ համար լավագույնն է ցանկանում: Սակայն անակնկալի չգաս, եթե քեզ մեղքի փորձություններ հանդիպեն: Դժվար թե սատանան կարմիր դրոշը ձեռքին թափահարելով գա և ասի. «Հե՛յ, ես սատանան եմ և եկել եմ, որ քեզ մեղքի մեջ գցեմ»: Շատ քրիստոնյաներ դժվարանում են Աստծո ձայնը տարբերել սատանայի ձայնից: Ամենաշատը մեզ շփոթեցնում է այն, որ թե՛ Աստված, թե՛ սատանան հաճախ մեզ հետ խոսում են մեր մտքի միջոցով:

Աստվածաշունչը ուղեցույցներ է տալիս, որոնք կարող են մեզ օգնել հասկանալու՝ տվյալ միտքն Աստծո՞ւց է, թե՞ սատանայից: Ահա երկու օրինակներ, նաև տեղեր՝ նորերը ավելացնելու համար:

(1) Աստված երբեք քեզ չի ասի, որ խախտես Իր օրենքները:

(2) Սատանան կփորձի քո կյանքի կարիքը քեզ այնպես զգացնել տալ, որ խախտես Աստծո օրենքները: Օրինակ, սատանան քեզ այսպիսի միտք կարող է ուղարկել. «Դու սոված ես, իսկ այստեղ ուտելիք կա: Դու կարող ես մի բան վերցնել, ու ոչ ոք չի նկատի: Դու ոչ ոքի վնաս չես տա, եթե դա վերցնես: Իսկ դու հենց հիմա իրո՛ք դրա կարիքն ունես»: Սատանայի գայթակղություններն այդ պահին շատ տրամաբանական են թվում: Եվ դրա պատճառն այն է, որ մեր հոգևոր միտքը դեռ

այնքան չի հասունացել, որ հասկանանք, թե ինչ է Աստված ասում այդ մասին: Այս դեպքի համար Աստված ասում է. «Մի՛ գողացիր»:

(3)

(4)

(5)

2. Աստծո զորությունն իրակա՞ն է:

Եթե դու վերջերս ես դարձել ճշմարիտ քրիստոնյա, ապա հնարավոր է՝ քո կյանքում ավելի շատ տեսել ես սատանայի ուժը, քան Աստծո: Շատ երիտասարդների կյանքում այսօր գործում է սատանայի կործանիչ ուժը. բռնություն, ատելություն, սպանություն, անօրենություն:

Ի՞նչ ես դու մտածում այս ամենի մասին: Ի՞նչ ես դու մտածում սատանայի ուժի մասին: Որքա՞ն ուժեղ է նա այսօր: Աստվածաշունչը հստակեցնում է, որ սատանայի ուժն իրական է և գործում է այսօրվա մեր աշխարհում: Աստված մեզ նախազգուշացնում է, որ պատրաստ լինենք նրա հարձակումներին:

Եփեսացիներին 6.10-13.

«Վերջապես, եղբայրնե՛ր, ուժե՛ղ եղեք Տիրոջով և Նրա զորության կարողությամբ: Ձեզ վրա հագեք Աստծո սպառազինությունը, որ կարողանաք ընդդիմանալ Սատանայի հնարքներին: Որովհետև մենք մարմնի և արյան հետ չենք պատերազմում, այլ՝ իշխանությունների դեմ, զորությունների դեմ, այս աշխարհի խավարի իշխանների և բարձր տեղերում եղող հոգևոր չարության դեմ: Դրա համար սպառազինվե՛ք Աստծո ամբողջ սպառազինությամբ, որպեսզի չար օրում կարողանաք դիմադրել և այս ամենը կատարելուց հետո կանգնել»:

Այս համարները ցույց են տալիս, որ չար ուժերն իրական են այս աշխարհում, բայց մենք կարիք չունենք դրանցից վախենալու, եթե ապավինենք Աստծո մեծ զորությանը, որ մեր ներսում է: Երբ սատանան Հիսուսին անապատում փորձության ենթարկեց, Հիսուսը նրանից չվախեցավ: Նա Աստծո հանդեպ Իր նվիրվածության մեջ հաստատուն մնաց և սատանայի փորձություններին պատասխանեց Աստվածաշնչի մեջբերումներով: Մեկ ուրիշ դեպքում էլ Հիսուսը դուրս քշեց դևերին մարդկանց միջից:

Աստվածաշունչը մեզ նախազգուշացնում է, որ զգոն լինենք սատանայի հարձակումներին: Աստվածաշունչը սատանային անվանում է ստության հայր: Նա մարդկանց մոլորեցնելու վարպետ է: Եվ այս մոլորության զոհերը կարող են լինել թե՛ հավատացյալները, թե՛ անհավատները: Եթե դու որոշել ես հետևել Քրիստոսին, ապա սատանան մեկ նպատակ ունի քո վերաբերյալ: Նա ուզում է կործանել քո փոխհարաբերությունն Աստծո հետ: Նրա համար կարևոր չէ, թե ինչպես դրան կհասնի:

Սատանան ուզում է, որ դու հավատաս, որ նա Աստծո պես ուժեղ է, կամ ավելի ուժեղ, քան Աստված: Պարզապես հիշի՛ր, որ սատանան ստության հայրն է և միշտ փորձելու է խաբել քեզ:

Ա Պետրոս 5.8-9.

«Արթո՛ւն մնացեք, հսկեցե՛ք, որովհետև ձեր հակառակորդը՝ Սատանան, մռնչացող առյուծի պես պտտվում ու փնտրում է՝ թե ում կուլ տա. հաստատուն հավատով նրան դե՛մ կանգնեք՝ գիտենալով, որ ձեր եղբայրներն աշխարհում նույն չարչարանքն են կրում»:

Հետաքրքիր է նկատել, որ շատ համարներ, որոնք խոսում են սատանայի մասին, նաև վստահ քաջալերական խոսքեր են փոխանցում, թե ինչպես կարող ենք հաղթահարել սատանայի հարձակումները: Մենք չենք կարող սատանային հաղթել մեր սեփական ուժով: Մենք պետք է ապավինենք Աստծո օգնությանն ու Նրա զորությանը, որ մեր ներսում է: Եվ ամեն օր մենք կարող ենք Աստծո վստահությամբ ապրել: Նա մեր ներսում է, և Նրա զորությունը շատ ավելի մեծ է, քան ցանկացած բան, որ սատանան կարող է բերել մեր դեմ:

Սատանան սիրում է մարդկանց մեղքի ստրուկ դարձնել: Աստվածաշունչը սատանայի թակարդներից հեռու մնալու հստակ ցուցումներ է տալիս: Խաբեության և դիվային ուժերի միջոցով սատանան աշխատում է տարբեր ձևերով թակարդը գցել մարդկանց, օրինակ՝ օկուլտիզմի, աստղագուշակության և հոգեկանչության: Հորոսկոպը սատանայի թակարդներից մեկն է: Նրանք, ովքեր հավատում են դրան, սովորեցնում են, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում քո կյանքում, ղեկավարվում է աստղերի և կենդանակերպի նշանների կողմից:

Սա ուղղակի հակասում է այն ամենին, ինչ Աստվածաշունչն է մեզ սովորեցնում աշխարհի և կյանքի մասին: Աստված է միայն կառավարում տիեզերքը, ոչ թե աստղերն ու կենդանակերպի նշանները: Եթե Աստված ցանկանար, կարող էր ստիպողաբար կառավարել քո կյանքը, սակայն Նա այդ ձևով չի գործում: Դու պետք է որոշես թույլ տալ Նրան, որ կառավարի քո կյանքը: Հորոսկոպը քեզ գցում է վախի թակարդը, որպեսզի անհանգստանաս, թե ինչ նշանակություն ուներ քեզ հանդիպած որևէ խնդիր կամ պատահար:

Հնարավոր է՝ Աստծո զորությունը դեռ չի գործել քո կյանքում: Սակայն Աստվածաշունչ կարդալիս դու կտեսնես պատմություններ, որոնք մեկը մյուսի հետևից ցույց են տալիս, որ Աստծո զորությունը շատ ավելի մեծ է, քան սատանայինը: Աստված նաև խոստացել է միշտ մեզ հետ լինել (Մատթեոս 28.20):

Պատճառներից մեկը, թե ինչու են մարդիկ կասկածում Աստծո զորությանը, այն է, որ նրանք աղոթել են և Աստծուց օգնություն խնդրել, բայց ոչինչ տեղի չի ունեցել: Նրանք ամեն օր հրաշքներ չեն տեսնում, բայց ամեն օր տեսնում են, որ սատանան իրենց ենթարկում է փորձության, և մտածում են՝ արդյո՞ք Աստված իրական է: Նրանք տառապում են ինչ-որ խնդրի պատճառով, սակայն թվում է՝

աղոթքը չի լուծում այդ հարցը: «Եթե Աստված իրական է և իրական զորություն ունի, ինչո՞ւ Նա չի վերացնում իմ խնդիրները»,- հարցնում են նրանք:

Աստված է ստեղծել աշխարհը և այն ամենը, ինչ դրանում է: Նրա զորությունը մեր հասկացողությունից վեր է: Մենք նաև պետք է հասկանանք, թե ինչպես է Աստված որոշում օգտագործել Իր ուժը:

3. Քո ներսում եղած ուժը:

Աստծո զորությունն իրական է: Սակայն բոլոր մարդկանց մեջ կա ուժի մեկ այլ աղբյուր ևս: Մենք ընդամենը թելերի վրա խամաճիկներ չենք՝ Աստծո կամ սատանայի համար: Աստված մեզ ստեղծել է շատ բաներ անելու կարողությամբ՝ առանց Աստծո կամ սատանայի աջակցության: Մարդկային միտքը զարմանահրաշ ուժ ունի: Շատերը կարող են հիվանդանալ՝ հենց միայն մտածելով, որ իրենք հիվանդ են: Մարդկային միտքը մարդուն կարող է հասցնել դեպրեսիայի այնպիսի աստիճանի, որ իրենց շարունակ հոգնած զգան, կամ նույնիսկ մտածեն ինքնասպանության մասին:

Շատ անգամ հավատացյալները մեղքի փորձությունների համար մեղադրում են սատանային: Անշուշտ, հաճախ սատանան է փորձում մեզ: Սակայն երբեմն էլ մենք ենք մեղսալից բաներ մտածում և փորձություններ բերում մեզ վրա: Սատանային մնում է միայն նստել հանդիսատեսի աթոռին ու հրճվանքով նայել մեզ:

Ողջ Աստվածաշնչով մեկ պատգամը հստակ է. յուրաքանչյուր մարդ բարին կամ չարը ընտրելու կարողություն ունի: Եթե դու ընտրում ես չարն անել, սատանան շատ մոտ է՝ պատրաստ քեզ օգնելու: Եթե ընտրես բարին անել, ապա Աստծո կարիքը կունենաս, որպեսզի մինչև վերջ հետևես քո ընտրությանը: Սակայն մարդու կարողությունն ավելին է, քան պարզապես բարու և չարի միջև ընտրություն կատարելը:

Դու երբևէ լսե՞լ ես ճանաչված մարզիկի հարցազրույց, որում նա բացատրում է հաջորդ կայանալիք մրցույթին նախապատրաստվելու դժվարությունների մասին: Երբեմն աստղերը կարող են պատմել վերջերս ստացած վնասվածքի և իրենց՝ վերականգնման ընթացքի մասին: Սակայն ավելի հաճախ նրանք կպատմեն, թե որքան դժվար է կայանալիք մրցույթին մտքով նախապատրաստվելը: Նրանք գիտեն, որ իրենց մարմինը գերազանց մարզավիճակում է: Իսկ մտքի ո՞ւժը: Նրանք պետք է ստիպեն իրենց մտքին՝ մի կողմ դնել բնական պաշտպանությունները և թույլ տալ, որ իրենք իրենց մարմինը հրեն բնական սահմանափակումներից այն կողմ՝ հաղթելու նպատակով: Հաղթության բանալին հաճախ մտավոր հաղթությունն է, ոչ թե այն, թե ով է ավելի լավ մարզավիճակում:

Օրվա ընթացքում դրսևորած քո վերաբերմունքները հստակ ազդանշաններ են մարդկանց, Աստծո և նաև սատանայի համար: Քո վերաբերմունքը տարբեր իրավիճակներին ցույց է տալիս քո կարողությունը: Որքա՞ն քաջություն,

ինքնատիրապետում, խանդավառություն, սեր և համբերություն ունես դու. դա ցույց են տալիս քո խոսքերն ու գործողությունները: Դու կարողություն ունես այդ բոլորը փոխելու, և Աստված պատրաստակամ է՝ օգնել քեզ: Սակայն շատ մարդիկ, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ չեն, այս ասպարեզում մեծ փոփոխություններ են արել նույնիսկ առանց Աստծո օգնությունը փնտրելու:

Քո ներսում եղած մարդկային ուժն ունի իր բնական սահմանափակումները: Մարդիկ կարող են մեծ սխրանքներ գործել, օրինակ՝ Գինեսի գրքում կամ Աշխարհի ռեկորդներում գրանցվածները: Սակայն մենք չենք կարող մեր սեփական կարողությամբ հրաշքներ գործել: Մենք սահմանափակված ենք այն կարողությամբ, որով Աստված մեզ ստեղծել է: Որոշ մարդիկ փորձել են իրենց կարողությամբ գերբնական բաներ անել, սակայն չի ստացվել: Մարդը կարող է մյուսներին խաբել, որ իբր հրաշք է գործում, սակայն հետո փաստերը բացահայտվում են, և խաբեությունը պարզ է դառնում:

Որոշ հավատացյալներ թյուրըմբռնում ունեն առ այն, թե ինչպես է Աստված գործում մարդկանց միջոցով հրաշքներ կատարելու համար: Նոր Կտակարանի առաքյալները նույնպես այս խնդրին հանդիպեցին: Մարդիկ կարծում էին, թե Պողոսը կարողանում է հիվանդներին բուժել: Աստված էր, որ օգտագործում էր Պողոսին, և ոչ թե Պողոսը, այլ Աստծո զորությունն էր, որ բուժում էր մարդկանց (տե՛ս Գործք 14.8-18): Աստվածաշունչը մեզ զգուշացնում է, որ չփորձենք նմանակել Աստծո հրաշքները, ոչ էլ Աստծուն հարկադրենք, որ հրաշք գործի: Մենք Աստծո ծառաներն ենք, ոչ թե ղեկավարը: Մենք չենք կարող Աստծուն ասել, թե Նա ինչ պետք է անի: Մենք կարող ենք խնդրել Աստծուն, որ հրաշք գործի, սակայն պետք է պատրաստ լինենք՝ ընդունել Նրա որոշումը, ինչ էլ որ այն լինի:

Բ. Սատանան ուզում է շփոթեցնել արհեստածին փորձություններով:

1. Սատանան ունի արհեստական փոխարինող այն բոլոր բարի գործերին, որոնք Աստված ունի քո կյանքի համար:

Աստծո՝ աշխարհում դրած ցանկացած բարի գործի համար սատանան ունի իր արհեստածին փոխարինողը: Նա խորամանկորեն փորձում է աղավաղել Աստծո ստեղծագործության բոլոր հիանալի կողմերը և դրանք վերածել մեղքի:

- Սեռական կյանքի սիրո առողջ փոխհարաբերությունները վերափոխվել են կրքի, անառակության, պոռնոգրաֆիայի և համասեռամոլության:
- Գերազանց աշխատանք կատարելու առողջ բավարարվածությունը վերափոխվել է եսասեր հպարտության և գոռոզ վերաբերմունքի:

- Համապատասխան սնունդ, հագուստ և բնակարան ունենալու ցանկությունը վերափոխվել է ագահության. որքան հնարավոր է՝ շատ ունենալ՝ անկախ այն բանից, թե ինչպես կարող է դա ազդել մյուսների վրա:

Աստծո ցանկացած բարի և կատարյալ պարգև սատանայի միջամտությամբ կարող է կամ շահագործվել, կամ էլ փոխարինվել արհեստականով, ներառյալ՝ Սուրբ Հոգու պարգևները:

2. Հավա՞տ, թե՞ ենթադրություն:

Մի խնդիր, որը որոշ հավատացյալներ ստեղծում են իրենք իրենց համար, այն է, որ Աստծո ծրագրերին հետևելու փոխարեն փորձում են օգտագործել Աստծո ուժն այնպես, ինչպես իրենք են ուզում: Աստված այսօր ուզում է մեզնից յուրաքանչյուրին գործածել Իր գործն անելու համար: Բայց և այնպես, մենք կարիք ունենք վստահ լինելու, որ հետևում ենք Նրան, ոչ թե փորձում ենք Նրա ղեկավարը լինել:

Ենթադրությունը մի բան է, երբ համարում ենք, որ գիտենք, թե ինչ է Աստված մեզնից ուզում՝ առանց իրականում Նրանից լսած լինելու: Գործողությունները, որոնք հետևում են «ենթադրությանը», իրենցից ներկայացնում են քայլեր, որոնց վերաբերյալ դու ենթադրում ես, թե Աստված է ուզում, որ անես, չնայած այն բանին, որ Աստված քեզ չի ասել, որ այդ գործողություններն անես:

Ենթադրությունը կարելի է հասկանալ այսպես. դու որոշում ես կայացնում ըստ այն բանի, թե ինչ կաներ Աստված նման իրավիճակում, և առաջ ես գնում և քայլեր անում՝ կարծես թե Աստված արդեն կայացրել էր այդ որոշումը:

Ահա մի օրինակ, թե ինչ տեսք ունի ենթադրությունը ներկա իրավիճակներում: Օրինակ, քո ընկերներից մեկը քեզ հրավիրել է իր տուն: Տեղ հասնելով՝ տեսնում ես, որ դուռը բաց է, սակայն քո ընկերը տանը չէ: Դու տեսնում ես 50.000 դրամանոց մի թղթադրամ, որը դրված է խոհանոցի սեղանին, և մտածում ես. «Ես վստահ եմ, որ իմ ընկերն այս գումարն ինձ համար է դրել այստեղ»: Դու վերցնում ես գումարն ու մի երկտող թողնում. «Մի ժամից կգամ»:

Դու գնում ես խանութ, նոր հագուստներ ես գնում, կամ ուրիշ բաներ, այն, ինչ ուզում ես:

Մեկ ժամ հետո վերադառնում ես քո ընկերոջ տուն՝ շատ ոգևորված լինելով քո նոր հագուստներով, և տեսնում ես, որ ընկերդ շատ նեղված է 50.000 դրամի կորստով: Երբ ընկերոջդ պատմում ես, թե ինչ ես արել դրա հետ, դժվարանում ես հասկանալ, թե ինչո՞ւ է նա այդքան բարկացած քեզ վրա:

Մենք կարիք ունենք խուսափելու սխալից, այսինքն՝ համարելու, որ գիտենք, թե ինչ է Աստված ուզում մեզնից: Մինչդեռ մենք պետք է համոզվենք, որ հետևում ենք Նրան, ոչ թե ասում, թե Նա ինչ պետք է անի:

Եթե դու ուզում ես, որ Աստված քեզ օգտագործի, ապա պետք է հասկանաս, թե ինչ է Նա ուզում, որ դու անես, և ինչպես է ուզում, որ դա արվի: Բազմաթիվ դժբախտություններից հնարավոր կլիներ խուսափել, եթե մարդիկ մի փոքր ավելի զգույշ լինեին և իմանային, թե ինչպես է Աստված գործում: Մենք կարող ենք խաղաղության մեջ լինել, եթե ապրենք ըստ հետևյալ պարզ ուղեցույցի.

«Աստծո կամքը Աստծո ասած ձևով և Աստծո ասած ժամանակին պետք է կատարվի այն մարդու միջոցով, ում Աստված է ընտրում»:

Կան չորս կետեր, որոնց հարցում դու պետք է համոզված լինես, եթե ուզում ես, որ Աստված գործածի քեզ:

1. Դու պետք է իմանաս, թե ի՛նչ է Աստված ուզում, որ արվի (Ինչ):
2. Դու պետք է իմանաս, թե արդյո՞ք այն անձնավորությունն ես, ում Աստված ուզում է օգտագործել տվյալ իրավիճակում (Ում):
3. Դու պետք է իմանաս, թե ինչպես է Աստված ուզում, որ այդ գործն արվի (Ինչպես):
4. Դու պետք է իմանաս, թե երբ է Աստված ուզում, որ այդ գործն ավարտվի (Երբ):

Չորսից երեքն իմանալը բավարար չէ: Երբ դու առաջ ես գնում և փորձում ես Աստծո կամքն անել առանց նախապես այս չորս պայմաններն իմանալու, ապա ենթադրության մեղքում հայտնվելու լուրջ վտանգի մեջ ես:

«Ենթադրություն» բառը 11 անգամ նշված է Աստվածաշնչում: Ամեն անգամ այն կոչվում է մեղք: Ինն անգամ գրված է, որ դրա ուղղակի հետևանքը եղավ մահը: Եբրայերենում ենթադրության և հպարտության համար նույն բառն է օգտագործվում: Կարիք չկա հպարտության վերաբերյալ Աստվածաշնչից շատ համարներ կարդալ հասկանալու համար, թե որքան լուրջ է Աստծո վերաբերմունքն այս մեղքի հանդեպ:

Նույն քայլը մի անձնավորության համար կարող է հավատի քայլ լինել, մինչդեռ մեկ ուրիշի համար՝ ենթադրության: Մենք չենք կարող համարել, որ Աստված ուզում է, որ դու անես այն նույն բանը, ինչ Նա մեկ ուրիշին է ասել, որ անի: Ենթադրությունը մեղք է, որ փորձում է համարձակ ու խիզախ հավատացյալներին, ովքեր նախանձավոր են Աստծո համար ինչ որ բան անել:

Սատանան ուզում է քեզ շփոթեցնել, որպեսզի մտածես, որ դո՛ւ պետք է որոշես, թե երբ և ինչպես իրականացնես Աստծո կամքը և Աստծո գործը: Երբ Հիսուսն անապատում էր, սատանան եկավ և փորձեց Հիսուսին, որպեսզի Նա ենթադրությամբ վարվեր:

Մատթեոս 4.5-7.

«Այն ժամանակ Սատանան Հիսուսին տարավ սուրբ քաղաքը և Նրան կանգնեցրեց տաճարի աշտարակի վրա և Նրան ասաց. «Եթե Դու Աստծո Որդին ես, Քեզ այստեղից ցա՛ծ գցիր, որովհետև գրված է, թե. «Իր հրեշտակներին պատվիրելու է քեզ համար, որ իրենց ձեռքերի վրա կրեն քեզ, որպեսզի երբեք ոտքդ քարի չխփես»:

Եթե սատանան հաջողացնի՝ մեզ առաջ մղել Աստվածաշնչից վերցրած մեկ համարով՝ առանց Աստծուց կոնկրետ խոսք ստանալու, ուրեմն կարող է կործանել մեզ: Եթե Հիսուսը հետևեր սատանայի խորհրդին, կընկներ ենթադրության թակարդը: Ոչ ոք, նույնիսկ Հիսուսն իրավունք չունի Աստծուն ասելու, թե երբ և ինչպես գործածի Իր գերբնական ուժը հրաշքներ կատարելու համար: Հայրը լուռ էր, սակայն Հիսուսը չենթադրեց, որ Աստված ուզում է, որ Ինքն այդ քայլն անի: Եթե Աստված լռում է, ապա կարող ես վստահ լինել, որ Աստված չի ուզում, որ դու այդպես վարվես:

Ենթադրությունը չի վերաբերում մեր կյանքի բոլոր իրավիճակներին: Դու կարիք չունես առավոտյան Աստծուն հարցնելու. «Աստվա՛ծ, Դու ուզո՞ւմ ես, որ ես իմ կոշիկի կապերը կապեմ»: Ամենայն հավանականությամբ Նա կպատասխանի լռությամբ: Քո կոշիկի կապերը կապելը ոչ մի գերբնական ուժ չի պահանջում Աստծուց: Կամ՝ օրինակ, երբ ինչ-որ մեկը, ով ակնոց է կրում, տեսնելու համար ստիպված մոտենում է քեզ, խնդրում է, որ աղոթես իր համար: Իսկ հետո հարցնում է, թե արդյո՞ք պետք է մի կողմ նետի ակնոցը՝ ցույց տալու համար, որ հավատում է, որ Աստված բժշկել է իրեն: Դու հաստատ կարիք ունես Աստծուց լսելու՝ նախքան նրան կասես, որ մի կողմ նետի իր ակնոցը:

Եթե Աստված լռի՝ ի պատասխան Աստծուց իմաստություն ստանալու քո աղոթքի, ապա չպետք է ենթադրես, թե Աստված ուզում է, որ այդ անձնավորությունն ազատվի իր ակնոցից: Դու պետք է հորդորես նրան՝ գնալ աչքի բժշկի մոտ և ստուգել իր տեսողությունը: Եթե Աստված բուժել է նրա տեսողությունը, ապա դրա ֆիզիկական ապացույցը կլինի հենց ստուգումը: Այդ մարդը կարող է փառաբանել Աստծուն, նաև կարող է այդ բժշկին վկայելու հիանալի հնարավորություն ունենալ:

Ենթադրության մեղքը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մենք վերցնում ենք Աստվածաշնչի ընդհանուր խոստումներն ու դրանք կիրառում կոնկրետ դեպքերում, որտեղ Աստված կոնկրետ չի խոսել: Դ Թագավորաց 5-րդ գլխում մենք կարդում ենք Նեեմանի մասին, որը բորոտ էր և եկել էր Եղիսե մարգարեի մոտ: Աստված խոսեց Եղիսեի հետ և հստակ ցուցումներ տվեց, թե ինչպես Նեեմանը կարող է ապաքինվել: Նեեմանը պետք է գնար տիղմոտ Հորդանան գետն ու յոթ անգամ ընկղմվեր դրա մեջ: Նա հետևեց Աստծո ցուցումներին, և Աստված իրոք բուժեց նրան:

Շատ կան համարներ, որոնք մեզ քաջալերում են աղոթել բժշկության համար: Սակայն ոչ մի համար հստակ չի խոստանում, որ ինքնաբերաբար բժշկություն

տեղի կունենա, եթե հետևես որոշակի քայլերի հերթականության: Յուրաքանչյուր դեպքում մենք պետք է կախված լինենք Աստծուց, որպեսզի առաջնորդի մեզ և ասի, թե ինչ է Նա ուզում, որ մենք անենք տվյալ իրավիճակում:

Աստվածաշնչում շատ կան կոնկրետ օրենքներ և ուսուցումներ: Այդ դեպքում մենք կարիք չունենք Տիրոջից խոսք սպասելու՝ նախքան գործելը: Օրինակ, Տասը պատվիրանները հստակ ուսուցում են ներկայացնում այն մասին, թե ինչ անենք և ինչ չանենք: Շնությունը երբեք չի կարող Աստծո կամքը լինել: Քո ծնողներին հարգելն ու պատվելը միշտ Աստծո կամքն է: Այս ուսուցումներին հետևելը, առանց Աստծուց հատուկ խոսք ստանալու՝ ենթադրությամբ քայլ անել չէ: Սակայն փորձել հրաշք անել առանց Աստծուց խոսք լսելու, արդեն ենթադրություն է: Ասել, թե՝ «Ես Տիրոջից խոսք ունեմ, թե ինչ պետք է անեմ այս իրավիճակում», այն դեպքում, երբ Աստծուց չես լսել, սա ենթադրաբար քայլ անել է և մեղք է:

Գ. Սխալները հավատի ուսուցումների մեջ այսօր:

Ցավալի է տեսնել, որ հավատի վերաբերյալ որոշ ուսուցումներ այսօր բավականին հակասական թեմա են դարձել շատ եկեղեցիներում: Հավատացյալները վիճաբանում են, և հավատի վերաբերյալ բաժանումներ են տեղի ունենում Աստվածաշնչի ուսուցման պատճառով:

Շատ կան թեմաներ այս հակասության շուրջ, և մենք չենք կարող մարդկանց բաժանել երկու խմբի. մարդիկ, ովքեր հավատին մեծ արժեք են տալիս, և մարդիկ, ովքեր այդպես չեն մտածում: Դասընթացի այս հատվածում մենք ուզում ենք անդրադառնալ այդ թեմաներից մի քանիսին, որոնք այդ հակասությունների կենտրոնում են:

1. Տարբերություն կա՞ հավատի և հավատալիքի միջև:

Ոմանք սովորեցնում են, որ «հավատ» և «հավատալիք» բառերը փոխարինաբար օգտագործվում են ողջ Նոր Կտակարանում: Նախքան փորձելը լուծել այս հարցը՝ պետք է կողմնորոշվել, թե ինչպես սահմանել այս երկու հասկացությունները: Իսկ հետո պետք է փորձել պարզել, թե ինչպես են մյուսները սահմանում այս բառերը: Եթե դուք չեք կարողանում համաձայնության գալ այս երկու բառերի սահմանման վերաբերյալ, ուրեմն լավ կլինի, որ լուռ մնաք:

Հավատալիք. համաձայնել փաստերի հետ:

Վստահություն. վստահել ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի:

Հույս. ակնկալիք, որ ապագայում ինչ-որ բան տեղի կունենա:

Հավատ. Աստծուց տրված ուժ, որը միշտ մղում է գործողության:

Ըստ հավատի այս նեղ սահմանման, որը նախապես տրվել էր սույն գրքում, այս երկու բառերը՝ հավատ և հավատալիք, իրարից տարբեր են: Դու կարող ես հավատալիքներ ունենալ, բայց ոչինչ չձեռնարկել այդ ուղղությամբ: Բայց երբ հարցը վերաբերում է իրական հավատին, այն գործողություն է պահանջում: Հակոբոս 2.14-26-ը մատնանշում է մեր կարիքը՝ հիմնավորել մեր հավատը մեր գործողություններով: Ամեն անգամ, երբ Հիսուսը խոսում էր հավատի մասին, կամ ասում էր, որ ինչ-որ մեկը հավատ ունի, Նա դա ասում էր տեղի ունեցած որևէ հրաշքի համատեքստում: Գործողությունը միշտ ուղեկցում է հավատին:

Հիսուսը հիվանդ մարդուն երբեք չէր ասում. «Դու բժշկված ես: Թեև մենք երկուսս էլ դեռևս տեսնում ենք հիվանդության ախտանիշները, սակայն շարունակի՛ր հավատալ, և այդ ախտանիշները կանցնեն: Դու բժշկված ես»: Ո՛չ: Աստծո ձևը միշտ համապատասխանում է իրականությանը: Եթե մարդու աչքերը դեռևս կույր են, ուրեմն նա դեռ չի բժշկվել:

Դու կարող ես ընդհանուր առմամբ հավատալ, որ Աստված կարողանում է մարդկանց բժշկել, սակայն կոնկրետ հավատ՝ Աստծուց տրված ուժ, չունենալ՝ բժշկություն անելու համար: Աստծո հրաշագործ հավատը տրվում է նրանց, ովքեր հավատում են Աստծուն, սակայն ոչ թե միայն այն պատճառով, որ նրանք հավատում են, այլ նաև կոնկրետ իրավիճակի պատճառով, որտեղ Աստված իրոք ուզում է դրսևորել Իր զորությունը և փառք բերել Իր անվանը:

2. «Հավատի բառերը» «կախարդական փայտիկ» չեն՝ հրաշքներ անելու համար:

Ոմանք ուսուցանում են, որ մարդը պետք է Աստծո Խոսքն իմանա, որպեսզի կարողանա հավատ գործադրել: Ընդհանուր առմամբ՝ շատ դեպքերում, սա ճիշտ է: Բայց և այնպես, ոմանք սովորեցնում են, որ եթե դու ճիշտ բառերն իմանաս, թե ինչ պետք է ասես, Աստված կանի այն, ինչ դու կասես: Խնդիրն այն է, թե ինչպես է մարդը Սուրբ Գրքի խոսքերն օգտագործում: Իրականում Աստվածաշնչի խոսքերը չի կարելի օգտագործել որպես կախարդական փայտիկ՝ հրաշքներ անելու համար: Հիսուսի ծառայությունը սրա պարզ օրինակն է: Նա ամեն անգամ Հին Կտակարանից մեջբերումներ չէր անում, երբ ինչ որ մեկին բժշկում էր: Նա հազվադեպ էր նույն բառերն օգտագործում, երբ տարբեր առիթներով բժշկում էր մարդկանց:

Մենք չենք կարող Աստվածաշնչից մեկ համար դուրս հանել և ասել, որ Աստված պետք է դա անի, որովհետև դա գրված է Աստվածաշնչում, իսկ Աստված սուտ չի խոսում: Մենք պետք է հիշենք, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր խոսք մեկնաբանվում է Աստվածաշնչի մյուս խոսքերի միջոցով: Յուրաքանչյուր համար բացատրվում է մյուս համարներով: Բանալին հավասարակշռությունն է: Հիսուսը սա ցույց տվեց սատանային պատասխանելիս, երբ սատանան Սուրբ Գրքից մեջբերում արեց Նրա համար:

3. Ո՞րն է հավատի գործողությունը:

Որոշ մարդիկ ուսուցանում են, որ հավատն ավելին չէ, քան դավանելը այն, ինչ Աստծո Խոսքն է ասում: Եթե դու կրկնես Աստվածաշնչի խոսքերը, կունենաս այն, ինչ ասում ես: Սա նաև կոչվում է դրական դավանանք: Սա հաճախ սխալ է օգտագործվում: Մի նորադարձ հավատացյալ, ով 150 սմ հասակ ուներ, քայլում էր եկեղեցու շենքում և շարունակ կրկնում. «Ես 180 սմ հասակ ունեմ: Ես 180 սմ հասակ ունեմ»: Աստծո հավատը և Աստվածաշունչն այսպիսի բան ուղղակի չեն սովորեցնում:

Դու չես կարող կրկնել Աստվածաշնչի խոստումներն ու ինքնաբերաբար ստանալ դրանք: Աստված է հոգևոր զորություն տվողն ու հրաշքներ կատարողը: Աստվածաշնչից խոսքեր կրկնելը երբեք չի կարող փոխարինել Աստծուն և այն այն անձնական դերին, որը Նա ուզում է ունենալ մեր աղոթքների և կարիքների մեջ:

Դրական դավանանքն իրական դեր չունի հրաշքներ կատարելու՝ Աստծո կամեցողության մեջ: Մի անգամ, երբ Հիսուսը վերադարձավ իր հայրենի քաղաքը, չկարողացավ հրաշքներ անել նրանց անհավատության պատճառով (տե՛ս Մարկոս 6.1-6):

Մարդիկ, որոնց Հիսուսը բժշկեց, մոտենում էին Նրան և օգնություն էին խնդրում Նրանից: Շատերը դավանեցին, որ Հիսուսը կարող էր բուժել իրենց: Թվում է՝ Սուրբ Գրքում այս պատկերը շատ հստակ է: Աստված Իր օգնությունը չի հարկադրում նրանց, ովքեր դրա կարիքը չունեն:

4. Կասկած և բացասական դավանանք:

Արդյո՞ք կասկածը հիմնական պատճառն է, թե ինչու մենք չենք ստանում մեր խնդրածները: Գուցե երբեմն՝ այո, բայց ոչ միշտ: Հակոբոս 1.6-8-ը հստակ պատգամ է փոխանցում, որ երբեմն անհավատությունը արգելում է մարդուն՝ Աստծուց պատասխան ստանալ իր խնդրելու դիմաց: Բայց և այնպես, ըստ Մարկոս 9.14-29-ում բերված օրինակի՝ մի մարդ մոտեցավ Հիսուսին՝ խոստովանելով, որ անհավատություն ունի (տե՛ս 24-րդ համարը): Սակայն նա Հիսուսին խնդրեց օգնել իրեն իր անհավատության հարցում և բժշկել իր որդուն: Հիսուսը պատասխանեց նրա աղոթքին, թեև նա կասկածներ ուներ:

Աստված սիրող ու բազումողորմ Աստված է: Նա խորապես հոգ է տանում մեզ համար, նույնիսկ եթե մենք կատարյալ չենք մեր հավատի մեջ:

Շատ մարդիկ աղոթել են մեծ վստահությամբ, սակայն չեն տեսել Աստծո հրաշքը: Հակոբոս 4.3-ն ասում է. «Խնդրում եք և չեք ստանում, որովհետև վատ նպատակով եք խնդրում, որ ձեր ցանկություններին ծառայեցնեք»: Կասկածը պատասխան չստացած խնդրանքների միակ պատճառը չէ: Սխալ դրդապատճառները նույնպես պատճառ են:

Որոշ մարդիկ ուսուցանում են, որ մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի սխալ դավանանք չանենք: Եթե անենք, դա սատանային հիմք կտա՝ ավերելու համար այն լավ բաները, որոնք Աստված ծրագրել է մեզ համար: Այս ուսուցման հետ կապված՝ խնդիրն այն է, որ դա մասնակիորեն ճիշտ է: Եթե քո բացասական դավանանքը նկարագրում է հենց այն, ինչին դու հավատում ես տվյալ իրավիճակում, ապա մի՛ զարմացիր, եթե Աստված ոչինչ չանի:

Սակայն ոմանք այս գաղափարը հասցրել են ծայրահեղության: «Մի՛ դավանիր, որ դու մրսած ես»,- ասում են նրանք: «Եթե դու դա դավանես, կունենաս»: Հավատացյալների կյանքը վեր ու վար չի լինում՝ ըստ այն բանի, թե կասենք, կամ չենք ասի այդ հատուկ բառերը: Մեր կյանքը Քրիստոսում է, ոչ թե կրոնական կրկնությունների մեջ: Մեր հաղորդակցությունը Քրիստոսի հետ հիմնված է Նրա հանդեպ մեր սիրո և վստահության վրա:

Հովհաննես 16.33-ում Հիսուսը «բացասական դավանա՞նք» արեց, երբ խոստացավ, որ Իր հետևորդները հալածանքներ ու նեղություններ կունենան: Դա «բացասական դավանա՞նք» էր, երբ Հիսուսը Պետրոսին ասաց, որ նա գիշերվա ընթացքում, նախքան խաչելությունը, երեք անգամ ուրանալու է Հիսուսին: Ո՛չ: Հիսուսն այնպես էր ասում, կարծես դա արդեն եղել էր: Եթե դու հիվանդ ես և տաքություն ունես, դա դավանելը կամ ընդունելը ոչ կլավացնի քո վիճակը, ոչ էլ կվատացնի: Տաքությունը բժշկական պատճառ ունի. լոկ բառերը չեն կարող տաքություն առաջացնել:

5. Դեղամիջոց ընդունելը սխա՞լ է:

Նրանք, ովքեր սովորեցնում են, որ դեղ խմելն ու հավատը հակասում են իրար, լավ չեն հասկանում Աստվածաշունչը: Որտե՞ղ է գրված, որ հավատացյալները երբեք չպետք է դեղամիջոց օգտագործեն, կամ՝ որ բոլոր բժիշկները սատանայի գործիքներ են: Բոլոր բարի գործերն Աստծուց են գալիս: Աստված է ստեղծել և՛ մեր մարմինները, և՛ այն բաղադրիչները, որոնցից ստեղծվում են դեղամիջոցները: Նա սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք վայելենք մեր կյանքը երկրի վրա: Աստված շատ անգամներ է դեղամիջոց օգտագործել մարդկանց համար: Հին Կտակարանում շատ կան բժշկական օրենքներ հրեաների համար: S.I. McMillen-ն իր «None of These Diseases» գրքում ցույց է տալիս, որ Աստվածաշնչի օրենքները հաստատում են այսօրվա բացահայտված բժշկական ճշմարտությունները:

Ղուկասի Ավետարանի հեղինակը բժիշկ էր: Այսօր շատ կան բժիշկներ, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ են: Աստված կարող է նրանց օգտագործել ինչ-որ մեկին բուժելու համար, եթե կամենա, կամ էլ կարող է ակնթարթորեն բժշկել տվյալ մարդուն: Երբ Հիսուսը մի բորոտի բժշկեց, նրան ասաց, որ գնա քահանայի մոտ: Սա ցույց է տալիս, որ Հիսուսը հարգում էր Հին Կտակարանի բժշկական օրենքները, որոնք այդ ժամանակ դեռ գործում էին (տե՛ս Ղուկաս 5.12-14 և Ղևտացիս 14.1-32):

6. Աստված կապվա՞ծ է Աստվածաշնչի բառերով:

Կան մարդիկ, ովքեր սովորեցնում են, որ Աստված կապված է Աստվածաշնչի բառերով: «Եթե Նա դա ասել է Աստվածաշնչում, ապա պարտավոր է կատարել»: Այս ուսուցման գլխավոր խնդիրն այն է, որ այդ մարդիկ դժվարանում են հասկանալ, թե ով է Աստված: Նա քո մատուցողը չէ, ում դու կարող ես պատվերներ տալ: Նա Աստված է՝ տիեզերքի Արարիչը:

Աստվածաշունչն Աստծո Խոսքն է և ճշմարտությունն է: Սակայն մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի այն ճիշտ ձևով կիրառենք մեր կյանքում: Աստվածաշունչը չի վերահսկում Աստծուն: Աստված թույլ չի տա, որ դու Իրեն դնես մի շրջանակի մեջ ու ասես. «Աստված պետք է ամեն անգամ այսպես վարվի»: Աստված ազատ է՝ ազդելու մարդկանց վրա այնպես, ինչպես Ինքն է որոշում: Մեր գործը ոչ թե Աստծուն ասելն է, թե ինչ անի Նա, այլ անելն է՝ ինչ Նա է մեզ ասում:

Ինչ իրավիճակում էլ որ դու հայտնվես, վստա՛հ եղիր, որ Աստված իրոք հոգ է տանում քեզ համար: Նա խոստացել է քեզ հետ լինել: Նա քեզ հարկ եղած ուժը կտա, որպեսզի ապրես Նրա համար: Կլինեն դեպքեր, երբ Աստված կօգտագործի Իր գերբնական ուժը: Հնարավոր է՝ այդ հրաշքներից մի մասը լինեն քո միջոցով: Սակայն, ամեն դեպքում, ուշադրությունդ կենտրոնացրո՛ւ Աստծուն ավելի մոտենալու վրա: Նրա հանդեպ քո սերը քո կյանքի ամենակարևոր բանն է:

Եզրակացություն

Եթե դու ուզում ես ավելի աճել Աստծո հետ քո փոխհարաբերության մեջ, ապա կարիք ունես շարունակելու՝ ավելի շատ սովորել Աստծո մասին, և իմանալու, թե ինչպես է Նա ուզում գործել քո կյանքում: Ամեն բանից առավել Նա ուզում է մտերիմ և սիրո փոխհարաբերություն ունենալ քեզ հետ: Նա ուզում է, որ դու հաջողություն ունենաս այն ամենի մեջ, ինչ Նա ծրագրել է քեզ համար:

Այս դասընթացին մենք ուսումնասիրեցինք չորս որակներ, որոնք մենք մեր կյանքում զարգացնելու կարիք ունենք: Դրանք են՝ հավատալիք, վստահություն, հույս և հավատ: Հոգևոր իմաստով ուժեղ անձնավորություն լինելն այն չէ, թե ինչ կարող ես դու անել քո սեփական կարողությամբ: Ճշմարիտ հոգևոր զորությունն այս չորս հատկությունները քո կյանքում զարգացնելն է այնպես, որ Աստված կարողանա գործել քո միջոցով՝ անելու համար այն ամենը, ինչ ուզում է, որ դու անես: Քեզ անհրաժեշտ է սովորել, թե ինչպես կախված լինես Աստծուց այս ասպարեզներից յուրաքանչյուրում, որպեսզի ճշմարիտ հոգևոր ուժ զարգանա քո կյանքում:

Որպեսզի ամբողջովին դառնաս այնպիսին, ինչպիսին Նա է ուզում, որ լինես, դու Նրա օգնության, Նրա զորության և Նրա իմաստության կարիքը պետք է ունենաս: Աստված պատրաստ է դրանք բոլորը տալ քեզ: Դու պետք է սովորես գործածել Նրա զորությունն այնպես, ինչպես Նա է ուզում, որ դա գործածվի քո կյանքում: Դու պետք է Նրա հանդեպ հնազանդության մեջ քայլես: Եթե քո աչքերը

հառես Հիսուսին և աշխատես ամեն օր հետևել Նրան, կտեսնես, որ Նրա ուժը գործում է քո մեջ: Աստված քեզ կօգտագործի, որ օրհնություն լինես շատերի համար թե՛ մեծ և թե՛ փոքր հարցերում:

Հնարավոր է՝ Աստված քեզ երբևէ չգործածի մարդկանց բժշկելու հարցում, սակայն դա Աստծո ճշմարիտ զորությունն ունենալու միակ նշանը չէ: Դու կարող ես Աստծո զորությունն ամեն օր օգտագործել փորձություններին և ցանկացած խնդրին դեմ կանգնելու համար: Եվ հիշի՛ր, որ երբ դու թույլ ես, դա հնարավորություն է Աստծո զորության համար, որ այն գա քո կյանք և օգնի քեզ՝ արձագանքելու համար այնպես, ինչպես Աստված է ուզում, որ արձագանքես: